Azg
armenian daily

27 ՄԱՅԻՍ 2004 ՀԻՆԳՇԱԲԹԻ 97 (3020)

Կրակել են «Արմենիա-Լադայի» տնօրենի վրա

Ինչպես տեղեկացանք ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչության օպերատիվ տեղեկագրից, մայիսի 25-ին, ժամը 00.10-ին ոստիկանության Արաբկիրի բաժինը քաղաքացիներից ահազանգ է ստացել, որ Կարեն Դեմիրճյանի անվան «Երմետրոպոլիտենի» վարչական շենքի դիմաց սպիտակ «Նիվա» ավտոմեքենայից կրակում են: Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ նույն օրը, ժամը 00.05-ի սահմաններում Բաղրամյան պողոտայի թիվ 85 շենքի դիմաց «Նիվա» մակնիշի անհայտ համարանիշով ավտոմեքենայից կրակոցներ են արձակվել դեպի Կասյան փողոց ընթացող «Նիսան պատրուլ» մեքենայի ուղղությամբ, որի հետեւանքով ավտոմեքենան վարող, «Արմենիա-Լադա» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռաֆայել Շահմուրադյանը թիկունքի մասում ստացած վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց: Դեպքի հանգամանքները պարզվում են: Քննությունը վարում է դատախազությունը:

Անդրանիկ Միհրանյանն առաջարկում է հայ-ադրբեջանական հաշտեցման հանձնաժողով ստեղծել

Ադրբեջանցի փորձագետները ոգեւորված չեն այդ առաջարկից

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Մոսկվաբնակ հայ քաղաքագետ, այլեւս չգործող «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի» անդամ Անդրանիկ Միհրանյանն առաջարկել է ստեղծել հայ-ադրբեջանական հաշտեցման հանձնաժողով: «Միշտ չէ, որ ամերիկացիները պետք է ստեղծեն հաշտեցման հանձնաժողովներ՝ հայ-թուրքական, հույն-թուրքական», «Ազգի» հետ հեռախոսազրույցում ասաց Միհրանյանը:

Մոսկվայում մայիսի 25-26-ն անցկացվեց կլոր սեղան «Լեռնային Ղարաբաղ. լճացումից դեպի առաջադիմություն» թեմայով, որին մասնակցում էին փորձագետներ եւ քաղաքագետներ Հայաստանից, Ադրբեջանից, Լեռնային Ղարաբաղից, Ռուսաստանից: Միջոցառումն անցկացվում է Միջազգային խաղաղարարական կազմակերպության հովանավորությամբ: Կազմակերպության նախագահ Վադիմ Իժեւսկին նախօրեին ասել էր, որ համաժողովի հիմնական նպատակներից մեկը ղարաբաղյան հակամարտության մեջ ներգրավված կողմերի



ավելի սերտ երկխոսության համար պայմանների ստեղծումն է ռուսական կողմի ակտիվ մասնակցությամբ:

Մոսկվայում հավաքվել են բավականաչափ հայտնի գործիչներ, մասնավորապես Ադրբեջանը ներկայացվել է դիվանագետների ու փորձագետների հնուց կազմով՝ Թոֆիկ Զուլֆուգարով, Էլդար Նամազով, Ռասիմ Մուսաբեկով, Զարդուշ Ալիզադե, Ալի Աբբասով, Թաջեդին Մեհտիեւ: Հայաստանից եւ Ղարաբաղից մասնակցել են մասնավորապես Անդրանիկ Միհրանյանը, Ալեքսանդր Իսկանդարյանը, Ռուբեն Զարգարյանը, Աղավնի Կարախանյանը եւ այլք: Կլոր սեղանին ներկա է եղել ղարաբաղյան բանակցային գործընթացի թերեւս ամենաբանիմաց դիվանագետը՝ Վլադիմիր Կազիմիրովը:

Տես էջ 2

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Կարգավորման հարցում Երեւանը Եվրամիության ակտիվ ներգրավվածությունը անհրաժեշտ չի համարում

Ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացում այլ կազմակերպությունների ակտիվ ներգրավվածության անհրաժեշտություն չկա, հայտարարել է Վարդան Օսկանյանը, մեկնաբանելով Եվրամիության ցանկությունը՝ կարգավորման գործընթացում ունենալ ակտիվ մասնակցություն: Ըստ «Ռեգնում» գործակալության, ՀՀ արտգործնախարարը հիշեցրել է, որ կարգավորման գործընթացը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում է, միջնորդներն ակտիվ աշխատում են, տեղի են ունենում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների եւ արտգործնախարարների հանդիպումներ:

Վարդան Օսկանյանը հերքել է մամուլում տարածված տեղեկությունները, թե հակամարտությունը հնարավոր է լուծել միայն փուլային տարբերակով: «Նմանօրինակ հայտարարություններ ոչ ոք չի արել: Այսօր բանակցային գործընթացը գնում է բաց օրակարգով եւ անիմաստ է պնդել կարգավորման ինչոր մի տարբերակ», ասել է նա: Օսկանյանը նշել է, որ Մինսկի խումբը նոր առաջարկություններ չի ներկայացրել: «Մենք տեսնում ենք հակամարտության կարգավորման հեռանկարները, հակառակ դեպքում բանակցելու բան չէինք ունենա: Բայց բոլորին է հայտնի, որ գործընթացը բարդ է, առկա են լուրջ տարաձայնություններ, անհրաժեշտ է աշխատել», ասել է Օսկանյանը:

Օսկանյանն ու Մամեդյարովը կհանդիպեն հունիսի 20-ին

ԵՐԵՎԱՆ, 26 ՄԱՅԻՍ, ԱՐՄԻՆՖՈ: Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների՝ Վարդան Օսկանյանի եւ Էլմար Մամեդյարովի երրորդ հանդիպումը տեղի կունենա հունիսի 20-ին Պրահայում: Այդ մասին այսօր հաղորդել են Ադրբեջանի լրատվական գործակալությունները: Նոր հանդիպման անցկացման մասին պայմանավորվածությունը ձեւաք էր բերվել Ստրասբուրգում կայացած նախորդ հանդիպման ժամանակ: Հիշեցնենք, որ Հայաստանի ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը Ստրասբուրգում կայացած հանդիպումը բնութագրել էր «դրական»:

Էդգար Առաքելյանը դատապարտվեց մեկուկես տարվա ազատազրկման

ԵՐԵՎԱՆ, 26 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը՝ դատավոր Պարգեւ Օհանյանի նախագահությամբ, մայիսի 26-ի դատավճռով ապրիլյան հանրահավաքի եւ երթի մասնակից Էդգար Առաքելյանին դատապարտեց մեկուկես տարվա ազատազրկման: Դատարանն այսպիսով հանցավոր ճանաչեց ամբաստանյալին ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի առաջին մասով՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու մեջ: Հիշեցնենք, որ ամբաստանյալը պլաստիկե ատով հարվածել էր ՀՀ ոստիկանության զորքերի բաժնի պետ, փոխգնդապետ Սահակ Մարտիրոսյանին:

Իր պաշտպանական ճառում եւ վերջին խոսքում ամբաստանյալն ընդունեց մեղադրանքը, հայտարարելով, որ զղջացել է արարքի համար: Նա հավաստիացրեց, որ երբեք չէր խարվածի ոստիկանին, եթե ձեռքին պլաստիկե ատի փոխարեն աղակե փայտ լիներ: Նա խնդրեց դատարանին հաշվի առնել, որ ինքը իրենց ընտանիքի հիմնական խնամողն է:

Առաքելյանի պաշտպան, փաստաբան Թադեւոս Ալեքսանյանը նշեց, որ տեղի է ունեցել հակահասարակական արարք, որը գուցե պետք է որակվեր որպես մանր խուլիգանություն, բայց ոչ այդպիսի ծանր ձեւակերպում սաանար: Նա ընդգծեց, որ իր պաշտպանյալը պլաստիկե փայտը իր հետ չի բերել, այլ «պարզ մարդկային բնազդով» գետնին ընկած փայտը բարձրացրել է եւ հարվածել: Պաշտպանը տարակուսանք հայտնեց մեղադրական եզրակացության «չարտոնված հանրահավաք» հասկացության կապակցությամբ, նշելով, որ այդպիսի հասկացություն գոյություն չունի:

Պաշտպանը հայտնեց, որ անպայման բողոքարկելու է դատավճիռը քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարան:

Ազատվել են Հանրապետական կուսակցության երկու անդամներ

«Ազգը» բազմիցս անդրադարձել է Հանրապետական կուսակցության քաղխորհրդի անդամ Արամազդ Զաքարյանի (ապրիլի 9-ին) եւ Թալինի կառույցի ղեկավար Ժորա Սափեյանի (ապրիլի 12-13-ի գիշերը) ձերբակալություններին: Իսկ երեկ, ինչպես տեղեկացրեց կուսակցության քաղխորհրդի անդամ Արսակ Զեյնալյանը, դատախազության որոշմամբ 2 ձերբակալվածներն էլ ազատ են արձակվել: Հիշեցնենք, որ երկուսի նկատմամբ էլ դատական բոլոր ատյանները վճիռը թողել էին անփոփոխ (կալանքը խափանման միջոց հիմնավոր է), իսկ այս վերջին որոշմամբ Արամազդ Զաքարյանի պարագայում եղել է հետեւյալ ձեւակերպումը՝ հաշվի առնելով նրա հաշմանդամությունը եւ արարքում հանցանքի բացակայությունը, Ժորա Սափեյանինը՝ հանցակազմի բացակայության պատճառով քրեական հետապնդումը դադարեցվում է: Քրեական գործը երկուսի մասով էլ կարճվել է:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Բախվում Ամերիկայի դեսպանը հերքում է անհերքելին

Բախվում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Հարնիշը, ըստ «Ռեգնում» գործակալության, երեկ հերքել է ադրբեջանական լրատվամիջոցներում տարածված լուրը, ըստ որի Լեռնային Ղարաբաղում գործում են ամերիկյան ընկերություններ: «ԱՄՆ-ը չի աջակցում Ղարաբաղի հետ առեւտրին եւ ներդրումներին», ասել է Հարնիշը, ընդգծելով, որ Ղարաբաղում ընդհանրապես չկան ամերիկյան ընկերություններ: Նախօրեին Ադրբեջանի խորհրդարանի մի շարք պատգամավորներ դատապարտել էին ամերիկացի դեսպանի այն հայտարարությունը, որով Հարնիշն անհնար էր համարել Վաշինգտոնի սանկցիաների կիրառումն ամերիկյան ընկերությունների նկատմամբ, որոնք գործունեություն են ծավալել Լեռնային Ղարաբաղում:

Ըստ էության, դեսպան Հարնիշը հերքել է անհերքելին, քանի որ ամերիկյան ընկերությունները ներդրումներ եւ առեւտուր անում են Ղարաբաղում: Ավելին, ԱՄՆ Կոնգրեսն առանձին տողով օգնություն է տրամադրում Լեռնային Ղարաբաղին:

Նկատենք, որ վերջին 3 տարիներին օտարերկրյա ընկերությունները Ղարաբաղի տնտեսությունում ներդրել են ավելի քան 30 մլն դոլար, եւ այդ ցուցակում առաջատարներից մեկը հենց Միացյալ Նահանգներն է: 1998 թ. աշնանից Ստեփանակերտում գործում է «Արեգակ» միկրովարկային ծրագրի գրասենյակը (ինչի մասին ադրբեջանական մամուլում եղել են մի շարք հրապարակումներ): Այս ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Կոնգրեսի հատկացրած 12,5 մլն դոլար օգնության շնորհիվ:

Այսօր Ղարաբաղում արտադրվող օղու, գինու եւ կոնյակի մի մեծ չափաբաժին տրամվում է ԱՄՆ-ում:

Որ մուտքը նոր կյանք ուրախ եւ անհոգ լինի

Մայիսի 25-ին, ինչպես հանրապետության բոլոր դպրոցների, այնպես էլ Աբովյան քաղաքի 864 10-րդցիների համար հնչեց վերջին զանգը՝ խորհրդանշելով մուտքը նոր կյանք: «Մուլտի գրուպ» կոնցեռնի նախագահ, Ազգային ժողովի պատգամավոր Գագիկ Ծառուկյանն այս տարի էլ արել էր ամեն ինչ՝ շրջանավարտների համար այս օրն անմոռանալի դարձնելու, նրանց ծնողներին հոգսերից զերծ պահելու համար:

Օրվա գլխավոր միջոցառումը երեկոյան էր՝ քաղաքապետարանին հարող հրապարակում, ուր հավաքվել էին ամբողջ Աբովյանը, շրջակա գյուղերի բնակիչները՝ սկզբում տոնական համերգի, իսկ տոնախմբության ավարտին՝ գեղեցիկ հրավառության: Շրջանավարտներին ողջունեցին, բարեմաղթանքներ հղեցին քաղաքապետ Կարո Իսրայելյանը, «Մուլտի գրուպ» կոնցեռնի նախագահ Գագիկ Ծառուկյանը:

«Աբովյանում վերջին զանգը տնելն արդեն ավանդույթ է դարձել, այն պետք է շարունակական լինի: Շրջանավարտներին ցանկանում եմ առողջություն, երջանկություն, թող որ նրանց նպատակներն իրականանան: Ես միշտ նրանց եւ Աբովյան քաղաքի հետ եմ: Բոլոր տոնակատարությունները միասին ենք նշելու», ասվածը Գագիկ Ծառուկյանի համար միայն խոսքեր չեն, նրա ասածը հիմնավորվում է գործերով: Ինչպես ամեն տարի, այս տարի էլ Աբովյանի բոլոր 10-րդցիների ավարտական բոլոր ծախսերը հոգացել էր «Մուլտի գրուպի» նախագահը: Տրամադրված 9 մլն դրամով Գագիկ Ծառուկյանն աբովյանցի շրջանավարտներին եւ նրանց ծնողներին զերծ էր պահել ծանր ծախսերից՝ ավարտական խմբանկարներից մինչեւ խնջույքի սեղանները:

Պատահական չէր, որ 10-րդցիները տոնական միջոցառման ժամանակ առիթը բաց չթողեցին ձեռը սեղմելու, անձամբ շնորհակալություն հայտնելու այն մարդուն, որն աջակցում է իրենց՝ մուտքը նոր կյանք ուրախ եւ անհոգ դարձնելու համար:

ԸՆԹԱՑԻԿ

Արամ Կարամեսյանն առաջարկում է լուծարել խորհրդարանը, արձակել կառավարությունը

Սակայն չի պահանջում Ռոբերտ Քոչարյանի հրաժարականը՝ առայժմ

«Նոր ժամանակներ» կուսակցության առաջնորդ Արամ Կարամեսյանը երեկ, ըստ էության, պահանջեց նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրաժարականը: Կուսակցության հրավիրած երիտասարդական ժողովում Կարամեսյանը բառացի չպահանջեց հանրապետության նախագահի հրաժարականը, սակայն գործող իշխանությանը ներկայացրեց 12 կետից բաղկացած առաջարկություն-ուլտիմատում, ինչի նիկական կառավարություն»: Ընդհանուր առմամբ՝ 12 առաջարկություն:

Կարամեսյանը մինչեւ սեպտեմբեր-հոկտեմբեր ժամանակ տվեց Քոչարյանին՝ բարեփոխումներ իրականացնելու համար, հակառակ դեպքում «այդ բարեփոխումներն արվելու են առանց Քոչարյանի», սկսվելու է «փուլ առ փուլ իշխանափոխության» ընթացքը, ինչը, «Նոր ժամանակների» ղեկավարի հավաստմամբ՝ «սկսվելու է առավածային կեղծիքներով (կարդալ՝ առուծախով) ձեւավորված խորհրդարանը: Օրերի համընկնումն, անշուշտ, չի նշանակում, թե Կարամեսյանը կասարում է իշխանությունների պասվերը, թեեւ փողոցում գործող ընդդիմադիր որոշ ուժերի ներկայացուցիչներ, որոնց թվում՝ Արաբես Գեղամյանը, հակառակն են պնդում:

«Նոր ժամանակները» երրորդ ուժ չէ, ընդդիմություն է եւ մնալու է ընդդիմություն, բանի դեռ այս հա-

իրագործումը Հայաստանում ստեղծված ներկա պայմաններում գրեթե անիրականանալի է:

Կարամեսյանը Քոչարյանին առաջարկում է քաղաքական դաշտում չեզոքացնել ուժային կառույցների ազդեցությունը: Ավելի հասկանալի լեզվով ասած, նա հանրապետության ղեկավարին կոչ է անում չեզոքացնել պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ազդեցությունը, մի գործչի, առանց որի անհնար է թվում Քոչարյանի հետագա պաշտոնավարությունը նախագահի աթոռին: Ի դեմ, Կարամեսյանն իր ելույթում նշեց, որ «երկրում կա պաշտպանության նախարար, որը պասասխանատու է ամեն ինչի համար»:

2003 թ. նախագահական ընտրություններում «անհայտությունից» եկած եւ 4 տոկոս էլ ստացած Կարամեսյանը հանրապետության ղեկավարին առաջարկում է նաեւ «սահմանված կարգով արձակել Ազգային ժողովը եւ նշանակել արտահերթ խորհրդարանական ընտրություններ», «ցրել ներկայիս կոալիցիոն-կուսակցական սկզբունքով ձեւավորված կառավարությունը եւ կազմավորել մասնագիտական հմտությունների վրա հիմնված տեխ-

վոյան եւ վերջանալու երեկոյան»:

Ուշագրավ էր «Նոր ժամանակների» երիտասարդական ժողով անցկացնելու ընտրած օրը: Մայիսի 26-ին լրացավ խորհրդարանական ընտրությունների մեկ տարին, ինչը նշանակում է, որ ըստ 1995 թ. զանգվածային կեղծիքներով ընդունված սահմանադրության զանգվածային կեղծիքներով ընտրված նախագահ Քոչարյանը լիազորություններ ունի ցրելու զանգ-

մակարգն է գործում, իսպառ չի գործում ՀՀ սահմանադրությունը», ասաց Կարամեսյանը, հավելելով, որ «մաֆիան Հայաստանում պետք է վերացվի», իսկ եթե «այսպես շարունակվի, ապա Ռոբերտ Քոչարյանը սուզվելու է կոալիցիայի հետ»:

Ի դեմ, Կարամեսյանը նշեց նաեւ, որ կոալիցիայի երկու կուսակցությունների՝ Հանրապետականի եւ ՀՅԴ-ի (հատկապես վերջինիս) որոշ դրույթներ համահունչ են «Նոր ժամանակների» դիրքորոշումներին: Հավելենք նաեւ, որ Կարամեսյանը 90-ական թթ. կեսերին եղել է Դաշնակցության ներկայացուցիչը Մոսկվայում:

Հ. Գ. Արամ Կարամեսյանը կրկնեց Արաբես Գեղամյանի հետ ունեցած հակասությունները դասարանում պարզելու իր դիրքորոշումը, այսինքն՝ «Ազգային միաբանությունը» զրպարտանքի համար պետք է պասասխան տա քաղաքակիրթ ձեւով: Մեր տպավորությամբ, եւ դա հաստատեց ժողովի երեկվա «անշլագը», Գեղամյանը չի զրպարտում Կարամեսյանին, այլ նախանձում է: «Նոր ժամանակները» կդառնա երրորդ ուժ, թե՝ ոչ, այլեւս անհետաքրքրական եւ ժամանակավրեպ թեմա է թվում: Կարամեսյանը ներքաղաքական դաշտում դառնում է նոր եւ իրական ուժ:

ԹԱԳՈՒՀ ՎԱՀՈԲՅԱՆ

Անդրանիկ Միհրանյանն առաջարկում է ...

Սկիզբը էջ 1

Միհրանյանի՝ Ռուսաստանի նախաձեռնությամբ հայ-ադրբեջանական հաշտեցման հանձնաժողով ստեղծելու առաջարկն արժանացել է ռուսական կողմի հավանությանը, մինչդեռ ադրբեջանական կողմին գաղափարն այնքան էլ չի ոգեւորել: «Ես առաջարկեցի ստեղծել հաշտեցման հանձնաժողով, որի անդամները պետք է ճնարկեն ոչ թե կարգավորման փաթեթային կամ փուլային տարբերակները, այլ փնտրեն հայ եւ ադրբեջանական հասարակություններում առկա անվստահության մթնոլորտը հաղթահարելու ուղիներ: Այսինքն՝ փորձել ստեղծել հանդուրժողական մթնոլորտ երկու ժողովուրդների միջեւ», մեզ հետ զրույցում ասաց Միհրանյանը:

Հայ քաղաքագետը հիշեցրել է, որ եթե հայերին եւ թուրքերին հաջողվեց հաստատել երկխոսություն, ապա նույնը կարելի է անել հայերի եւ ադրբեջանցիների պարագայում, մանավանդ որ, ի տարբերություն Հայաստանի եւ Թուրքիայի, որոնց միջեւ հակասություններն ավելի խորն են՝ հաշվի առնելով 1915 թ. Օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանության փաստը, ապա ինչո՞ւ չեն կարող երկխոսության եզրեր գտնել հայերն ու ադրբեջանցիները:

«Ես առաջարկեցի հայ-ադրբեջանական հաշտեցման հանձնաժողով ստեղծել, որի մասնակիցները կճնարկեին հաշտեղ տնտեսական, մշակութային միջոցառումներ անցկացնելու հնարավորությունները: Ես հիշեցրի Բուդապեշտի դեպքը, երբ ադրբեջանցի սպան կացնահարեց հայ սպային, ընդգծելով, որ բանի դեռ նման զարհուրելի դեպքեր են տեղի ունենում, դժվար է դարաբաղյան հարցում առաջընթաց գրանցել: Նախ եւ առաջ պետք է փոխել հոգեբանական իրավիճակը», ասաց Միհրանյանը:

Կլոր սեղանի ադրբեջանցի մասնակիցները հիշեցրել են, որ Հայաստանի առաջին նախագահը կողմ է եղել դարաբաղյան կարգավորման փուլային տարբերակին (ինչին, ի դեմ, կողմ էր նաեւ Ադրբեջանը), որին ի պասասխան հայ մասնակիցները հիշեցրել են, թե ինչով վերջացավ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմ լինելը կարգավորման այդ տարբերակին:

«Կոալիցիայի ձեւավորումը կուսակցությունների ամուսնություն կամ պարտադրանք չէ»

Տեղեկացնում է վարչապետը

ԱԺ-կառավարություն հարց ու պասասխանին երեկ հաջորդեց վարչապետ-լրագրողներ զրույցը, որի ընթացքում Անդրանիկ Մարգարյանը խորհրդարանի մեկամյա աշխատանքը գնահատեց նորմալ, ընդգծելով կառավարությունՍԱԺ համատեղ աշխատանքը: Դա էլ բնական համարեց, բանի որ կառավարությունում եւ խորհրդարանում քաղաքական մեծամասնության նույն ձեւաչափն է եւ կա սերտ համագործակցություն նաեւ ՄԱԿ խմբակցության եւ «Ժողովրդական պատգամավոր» խմբի հետ: Ընդդիմության բոյկոտի առնչությամբ Անդրանիկ Մարգարյանն ափսոսանք հայտնեց. «Օրենսդիր աշխատանքին դա այնքան չի խանգարում, որքան քաղաքական համաձայնության դաշտում այդ օրենքները ընդունելուն: Դա ավելի շատ պետք է մտահոգի հենց ընդդիմությանը, որի ներկայությունը ցանկալի է գալիք նստաշրջանում»:

Ընդդիմադիր կուսակցությունների ղեկավարների հետ հանդիպելու իր մտադրությունը վարչապետը չի իրականացրել, բանի որ առաջադրվել էին նախապայմաններ: Սակայն ընդդիմության դիրքորոշման փոփոխության դեպքում նա պատրաստ է եւ որպես կուսակցության ղեկավար, եւ որպես վարչապետ երկխոսությունը շարունակել: Վարչապետի կարծիքով, «2003-ի երկրորդ կիսամյակից, երբ ձեւավորվեց կոալիցիոն կառավարություն, հաջողվեց տարին փակել լավ ցուցանիշներով: Ինչ արվել է 2003-ին, ճիշտ է արվել, եւ մենք արդյունքներ ստացել ենք: 2004-ին պահպանում ենք նախորդ տարվա տեմպերը»:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների առնչությամբ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը հայտնեց իր համակարծությունն Արթուր Բաղդասարյանի հետ Թուրքիայից հողային պահանջներ չունենալու մասին, ընդգծելով, որ մինչ այժմ Հայաստանը հայտարարել է, որ ցանկանում է Թուրքիայի հետ նորմալ տնտեսական եւ դիվանագիտական հարաբերություններ ունենալ՝ առանց նախապայմանների: Մնացյալ հարցերը, վարչապետի կարծիքով, պետք է ճնարկվեն հետագայում:

Տարածաշրջանում նոր հաղորդակցության ճանապարհներ կառուցելու ծրագրերից Հայաստանի դուրս մնալու առնչությամբ տրված հարցին վարչապետը պասասխանեց. «Մենք բանակցում ենք եւ Ռուսաստանի, եւ Վրաստանի հետ աբխազական երկաթգիծը բացելու ուղղությամբ: Եթե դա բացվի, ապա այն, ինչ նախագծվում է, շատ ավելի հիշ հավանականություն կունենա: Մենք մեր խնդիրներն ունենք, մյուս երկրները՝ իրենց: Ուղղակի պետք է հաշվի առնել իրականությունը, թե Հայաստանը որքանով կարող է ազդել այդ խնդիրների լուծման վրա»:

«Վաղարշակ Հարությունյանի խափանման միջոցը փոխելու հարցում ՀՀԿ-ն որեւէ դեր կունենա՞, թե ո՞չ» հարցին վարչապետը պասասխանեց, որ «չի կարելի բեական գործերում քաղաքականություն խառնել եւ ասել, որ այս կուսակցությունը ցանկություն ունի բեական հոդվածով ձերբակալված մարդու գործին միջամտել: Պատգամավորները կամ քաղաքական ուժերը կարող են առաջարկել փոխել խափանման միջոցը: Ես հաստատ գիտեմ, որ ՀՀԿ-ն այդպիսի առաջարկ չի ներկայացրել»: Անդրանիկ Մարգարյանի գնահատմամբ, ներքաղաքական իրավիճակն ավելի լարված էր անցյալ տարի:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Կրթական օրինագիծը չհավաքեց անհրաժեշտ 66 կողմը

Առաջին ընթերցումն անցած «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրինագիծն ամբողջացվել է ԱԺ բոլոր խումբ-խմբակցությունների, կառավարության, բուհերի մի քանի ամսվա համատեղ աշխատանքով: Այն, հաշվի առնելով ավանդական մոտեցումները, եվրոպական կրթակարգին ինտեգրվելու նվազագույն հնարավորություն է ընձեռում եւ, կրթության նախարարի հավաստմամբ, ընդունելի է քաղաքական բոլոր ուժերի ու կառավարության համար: Չնայած ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանն օրինագիծը համարում է պատմական, իսկ Սերգո Երիցյանը կարծում է, որ 15 օրից կարելի կլինի ներկայացնել երրորդ ընթերցման, այնուամենայնիվ, օրինագիծը երեկ չանցավ երկրորդ ընթերցումը՝ 57 կողմ, ոչ մի դեմ եւ ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ:

Որքանով է հայրենասեր Հովիկ Հովեյանը. հետաքրքրված է Գուրգեն Արսենյանը

«Միավորված աշխատանքային կուսակցություն» խմբակցության ղեկավար Գուրգեն Արսենյանը երեկ մտահոգված էր այն հարցով, թե մշակույթի եւ երիտասարդության հարցերի նորանշանակ նախարար Հովիկ Հովեյանը որպես մարդ, ոչ որպես նախարար, ինչպես է պատասխանվում «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագրի սահմանած մշակութային քաղաքականության 3 գերակայությունների շրջանակում բավարարել ՀՀ քաղաքացիների եւ սփյուռքահայության համապատասխան պահանջներն ու ճաշակը: Արսենյանը ցանկություն ուներ համոզվելու նախարարի դիրքորոշման եւ ընտրության ճշմարտացիության մեջ: Սակայն վերջինս փաստեց, որ ինքն այժմ զբաղված է շուտով Սրաստանում ներկայացվելիք մշակութային զեկույցին ծանոթանալով եւ երեք ամիս նրանց ողջ բնագավառին ու աղարտին լիովին տեղեկանալուց հետո պատասխան կլինի ամենամանրակրկիտ զրույցի, իսկ առայժմ Հովիկ Հովեյանը չնայած կարող է լավ խոսել, բայց գերադասում է ավելի շատ աշխատել, քան խոսել եւ խորապես համոզված է, որ իր եւ Գուրգեն Արսենյանի հայրենասիրական մղումները լիովին համընկնում են:

Իշխանափոխության պահանջի այլ ձեւակերպում

Հմայակ Հովհաննիսյանը երեկ կառավարությունից փորձեց պարզել, թե արդյոք ժամանակը չէ՞ հրաժարվելու կառավարման կոալիցիոն սկզբունքից, քանի որ դրանից հանրապետությունում ավելի է խորացել հուսահատությունը: Որպես ապացույց պատգամավորը ներկայացրեց ազգային վիճակագրական ծառայության 2003-2004 թթ. հունվար-մարտ ժամանակահատվածի արտագաղթի եւ ներգաղթի տվյալները, որոնք, ըստ Հովհաննիսյանի, տագնապահարույց են եւ պարզաբանումներ են պահանջում՝ պատասխանատվությունը դնելով իշխանության համար գզվռտվող, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերածված կոալիցիոն կուսակցությունների, քաղաքական վերնախավի վրա:

Գրավոր պատասխան տալու ակնկալիքով հարցը գրավոր ձեւակերպմամբ պահանջող վարչապետ Անդրանիկ Մարգարյանն ի վերջո պատասխանեց բանավոր ասելով, որ նման եզրակացության գալու համար պատգամավորը պետք է ուսումնասիրեր վերջին 10 տարվա տվյալները եւ միգրացիայի վարչության աշխատանքը: Իսկ ինքը՝ վարչապետն ուղղակի հաճաձայն չէ Հմայակ Հովհաննիսյանի եզրակացությանը:

Հարց ուղղելու իրեն տրված ժամանակի մի մասն օգտագործելով՝ դաշնակցական պատգամավոր Հայր Կարապետյանը կարծիք հայտնեց, որ մինչեւ ՀՅԴ-ից Հմայակ Հովհաննիսյանի հեռացումը վերջինս պետք է, որ պարզած լիներ կուսակցության էությունը եւ հասկանար, որ ՀՅԴ-ն ոչ մի դեպքում չի կարող վերածվել գզվռտվող ՍՊԸ-ի:

Հարց ու պատասխանին հաջորդած լրագրողների հետ զրույցում Անդրանիկ Մարգարյանն ի պատասխան Հմայակ Հովհաննիսյանի հայտարարություն հիշեցնող հարցին հավաստեց, որ «կոալիցիայի ձեւավորումը կուսակցությունների ամուսնություն կամ պարտադրանք չէ, այլ բոլորի համատեղ ցանկությունն է, եւ եթե երեք կուսակցություններից որեւէ մեկը դժգոհ լիներ կոալիցիայի աշխատանքի ոճից, ձեւից, հեռանկարից, մինչ օրս հոյակապիրը չեղյալ հայտարարելու հայտ կներկայացներ: Մոտ ապագայում էլ նման առաջարկություն չի լինելու: Ուրեմն կոալիցիան իրեն արդարացրել է»:

Բացի այդ, վարչապետը հիշեցրեց, որ սա քաղաքական ուժերի կոալիցիա ձեւավորելու առաջին փորձն էր, եւ յուրաքանչյուր ամիս կոալիցիայի աշխատանքը շատ ավելի է հղկվում, հատկապես ԱԺ-ում: Իսկ կառավարությունում կոալիցիոն կուսակցությունների ներկայացուցիչներն ընդհանրապես խնդիրներ չունեն միմյանց հետ: ԱԺ-ում գործող կոալիցիոն կուսակցությունների միջեւ, վարչապետի հավաստմամբ, առկա են միայն տեխնիկական բնույթի խնդիրներ, որոնք կհարթվեն ժամանակի ընթացքում:

Ն. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 79 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայություն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են. համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

Ընթացիկ

Սոցիալական քարտերը մարդկանց պարտադրվում են

Այս օրերին մայրաքաղաքի դպրոցներում ուսուցիչներին ու աշակերտներին հարկադրաբար տրամադրում են սոցիալական քարտեր, որի դեմ ուսուցիչները չեն համարձակվում բողոքել միմիայն աշխատանքը կորցնելու վախից: Անգամ լրագրողներիս դիմելիս խնդրում են չհրապարակել դպրոցի անունը, պատճառաբանելով, որ այդկերպ իրենց բացահայտելը բավականին դյուրին կլինի, քանի որ դպրոցի տնօրենները լավ գիտեն, թե ովքեր են քարտերի դեմ ընդվզողները: Պարտադրվում է նաեւ ոստիկանության աշխատակիցներին, որոնք ճարահատ դիմել են «Ընդդեմ մարդկանց համարակալման» միավորմանը: «Մի ամբողջ ճնշիչ լծակ է գործում, որպեսզի մինչեւ հուլիսի 1-ը մարդկանց համարակալումն ավարտեն», երեկ հրավիրած մամլո ասուլիսի ժամանակ ասաց «Հայ արիական միաբանության» առաջնորդ Արմեն Ավետիսյանը:

Միավորումն արդեն հավաքել է օրենքից բողոքողների 75 հազար ստորագրություն: Առաջիկա շաբաթվա ընթացքում կհավաքվի եւս 25 հազար, որը դարձյալ կհանձնվի հանրապետության նախագահին, Ազգային ժողովին եւ Մայր աթոռին:

Միավորման պայքարը սկսել է պաշտպանել Մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանը, որը հարյուրավոր բողոքներ է ստանում մարդկանց սփիռողաբար քարտեր տրամադրելու մասին:

«Մարդու իրավունքների պաշտպանին ուղարկված բողոքներն ուսումնասիրվում են, դրանց մասին կհայտարարվի առանձին: Ուշադրություն է հատկացվում հատկապես օրենքում տեղ գտած թերությունների վրա», ասաց Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչ Դավիթ Կարմիրշալյանը:

Կրոնի եւ ազգային փոքրամասնությունների վարչության պետ Հրանուշ Խառատյանը նույնպես աջակցում է միավորմանը եւ իր տեսակետն է հայտնել սոցիալական ապահովության քարտի ու անհատական տվյալների օրենքների որոշակի անհամապատասխանության մասին՝ նկատի ունենալով ազգային պետական ու կրոնական խնդիրները:

«Ընդդեմ մարդկանց համարակալման» միավորումն առաջիկայում կանցկացնի լայնածավալ քննարկում, որից հետո, ամենայն հավանականությամբ, կկազմակերպի բողոքի ցույց:

Ի դեմ, Ուկրաինայում կառավարության դեմ բողոքի ակցիա կազմակերպելուց հետո սոցիալական քարտերի օրենքն այլեւս բռնի չի կիրառվում, այլ զուտ կամավոր սկզբունքով:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Զարգացման խոշոր ծրագրեր Արցախում

Եթե 20-րդ դարը եղել է նավթի ու գազի դար, ապա 21-րդը լինելու է ջրի դար, ուստի հիմիկվանից պետք է պատրաստվել դրան. այս տեսակետին է ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանը: Հիշյալ կարծիքը նա արտահայտել է օրերս ջրի հիմնախնդիրներին նվիրված խորհրդակցությունից հետո, որին ԼՂՀ գյուղատնտեսության եւ ջրային տնտեսության ոլորտների պատասխանատուներից բացի մասնակցել են նաեւ «Հայջուրնախագիծ» ինստիտուտի մասնագետները: Արցախը խմելու եւ ոռոգման ջրով ապահովելու հիմնախնդիրների լուծմանն ուղղված շուրջ երկու տասնյակ նախագծեր են մշակվել, որոնք էլ հենց դարձան նշված խորհրդակցության թեման: Ընդ որում, հստակեցվել են այս ուղղությամբ առաջնահերթ խնդիրները:

Ինչպես լրագրողներին տեղեկացրել է «Հայջուրնախագիծ» ինստիտուտի տնօրեն Յուրի Ջավադյանը, ծրագրված է Ստեփանակերտի ջրամատակարարման նպատակով կառուցել 3 մլն խմ ջրատարողությամբ ջրամբար, որը կապահովի 450 լիտր-վայրկյան ջուր եւ կգործի առնվազն 50 տարվա ժամկետով: Մյուս ծրագիրը ներառում է Մարտակերտ քաղաքի եւ հարակից գյուղերի ջրամատակարարումը: Յու. Ջավադյանի խոսքերով, երեք Մանկուք եկեղեցուց 6 կմ վերեւ գտնվող ջրակուտերից ջուրը 32 կմ երկարությամբ պիտի բերվի Մարտակերտ: Այն հնարավորություն կտա ոչ միայն շրջկենտրոնն ապահովել խմելու ջրով, այլեւ գոյություն ունեցող ջրանցքով ոռոգել 7 հազար հեկտար բերքատու հողեր: Այդ գծի կառուցումը թույլ կտա հետագայում եւս 2400 հեկտար բերրի հողատարածքներ ջրարբիացնել: Միեւնույն ժամանակ ջրանցքի վրա կկառուցվի 2 ՀԷԿ՝ յուրաքանչյուրը 5 մեգավատ հզորությամբ:

Ծրագրված է նաեւ ջրամբար կառուցել Ասկերանում: Դրա կառուցումը տեղի կունենա երկու փուլով, առաջին փուլի արդյունքում հնարավորություն կստեղծվի ոռոգվի դարձնել 1700 հեկտար հողատարածք: Եվ քանի որ հիմքերը պատրաստ կլինեն, հետագա սերունդները կարող են մեծացնել ջրատարողությունը, որտեղ կհավաքվի 23 մլն խմ ջուր եւ ոռոգելի կդառնա եւս 2000 հեկտար հողատարածք: Ջրամբարների կառուցմամբ Արցախում ոչ միայն կբարելավվի միկրոկլիման, այլեւ կապահովվի գյուղմթերքների բերքատվության բարձրացումը:

Մեր խնդրանքով ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանը պարզաբանումներ տվեց այս ծրագրերի կապակցությամբ: Նշելով միջին եւ խոշոր ջրամբարներ կառուցելու անհրաժեշտությունը, վարչապետն ասաց, որ հիմնական նպատակն է արդյունավետ օգտագործել Արցախի ջրային ռեսուրսները: Մասնավորապես, խոսքը երեք ջրամբարների՝ Ասկերանի, Վարանդա եւ Իշխանագետ գետերի վրա ջրամբարներ կառուցելու, ինչպես նաեւ Թարթառ գետի պատարների օգտագործման նախագծերի մասին է: Ա. Դանիելյանի համոզմամբ՝ ջրվի հողերը Արցախում ամենաթանկ եւ երկարատեւ գործող կապիտալն են եւ պետք է դրանք ռացիոնալ օգտագործվեն: Իսկ դրա համար պետք է կարողանալ ամբարել բոլոր ջրերը, որոնք ցավալիորեն հոսում եւ կորչում են ԼՂՀ-ից դուրս տարածքներում: Եթե «Հայջուրնախագիծ» ինստիտուտի հետ մշակված ծրագիրը հաջողվի իրականացնել, որում վարչապետը համոզված է, ապա կունենանք տարեկան 70-90 մլն խմ ջուր, որը ոչ թե տասնյակ, այլ հարյուրավոր տարիներով կլուծի Արցախում խմելու եւ ոռոգելու ջրի խնդիրը:

«Ուրախալի է այն հանգամանքը, որ Հայաստանում խոշոր ներդրումներ են կատարվում, լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց վարչապետը: Դրանք գլխավորապես արվում են Համաշխարհային բանկի եւ տարբեր դոնորների կողմից տրամադրվող ծրագրերի շրջանակներում: Եվ այստեղ նույնպես վստահ կա, որ եթե մենք չկարողանանք իրականացնել ԼՂՀ ոռոգման ծրագիրը, ապա կհայտնվենք մի այնպիսի վիճակում, երբ մեր գյուղատնտեսական ապրանքները այլեւս մրցունակ չեն լինի ՀՀ-ում արտադրվող գյուղատնտեսական ապրանքների հետ: Իսկ դա լուրջ մտահոգության առիթ պիտի հանդիսանա մեզ համար: Անհրաժեշտ է այնպես անել, որ կարողանանք Հայաստանի հետ համահունչ զարգացնել մեր տնտեսությունը: Մանավանդ որ գտնվում ենք նույն տնտեսական դաշտում», խոսքն ընդհանրացրել է Անուշավան Դանիելյանը: Վարչապետն ընդգծեց, որ տնտեսության, մասնավորապես գյուղատնտեսության վերելքի ապահովման առումով կառավարությանն գլխավոր խնդիրներից մեկը առաջիկա 10-15 տարում լինելու է ոռոգման համակարգի կատարելագործումը:

Անշուշտ, այս ծրագրերի իրականացումը կապված է նյութական մեծ ծախսերի հետ, որոնց առնչությամբ Ա. Դանիելյանը նշեց, որ դրանց մի մասը համատեղվում է էլեկտրաէներգիայի արտադրության ծրագրերի հետ, այսինքն՝ կա համագործակցություն եւ՝ «Հայջուրնախագիծ» եւ՝ «Հայէներգոնախագիծ» ինստիտուտների հետ: Հաշվարկված է, որ 7-8 տարվա ընթացքում կատարված ծախսերը կփոխհատուցվեն: Միաժամանակ կառավարությունը բանակցություններ է վարում բարեգործական կառույցների եւ տարբեր ներդրողների հետ, որպեսզի լրացուցիչ անհրաժեշտ միջոցներ ներգրավեն: Նախատեսվում է նաեւ պետության մասնակցությունը ոռոգման համակարգում լուրջ ներդրումներ կատարելու առումով, եւ այս համատեքստում կա ծրագիր 2005-2006 թթ. սկսել այդ ներդրումները նաեւ պետբյուջեի հաշվին:

ԼՂՀ-ի համադարձակ ջրապահովման խնդիրը ժամանակի պարտադրանքն է, որի ուղղությամբ տարվող աշխատանքները, հուսանք, ապագայում դրական արդյունքներ կարձանագրեն:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

ՄՐՑՊԵՏԱԿԱՆ

Կստանանք գերմանական նոր վարկեր եւ դրամաշնորհներ

Երեկ ավարտվեց հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովի երկօրյա աշխատանքը, որի ավարտից հետո կողմերը ստորագրեցին երկու երկրների միջեւ 2004 թ. զարգացմանն ուղղված երկկողմ համագործակցության շուրջ միջկառավարական խորհրդակցությունների արդյունքների արձանագրությունը: Այն ստորագրեցին Հայաստանի Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանն ու Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ տարածաշրջանային համագործակցության նախարարության Անդրկովկասի եւ Միջին Ասիայի բաժանմունքի տնօրեն Վոլֆգանգ Արմբրուստերը:

Միջկառավարական հանձնաժողովի համանախագահները արձանագրությունը ստորագրելուց հետո ներկայացրին հայ-գերմանական համագործակցության ոլորտները: Դրանք են վերականգնվող էներգետիկա, ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգ, համայնքային զարգացում, աղքատության կրճատման ծրագիր, փոքր եւ միջին ձեռնարկատիրություն եւ այլն: Վարդան Խաչատրյանը հայտնեց, որ գերմանական կողմը կֆինանսավորի Արմավիրի մարզի Նոր Ակունքի եւ Լոռու ու Շիրակի մարզերի ջրամատակարարման վերականգնման ծրագրերը: Հայկական կողմն ընդունել է այն պայմանը, որ դրանից հետո ջրի սակագները պետք է ինքնածախսածածկող լինեն: Այդ սակագնի մեջ, սակայն, չպետք է մտնեն կապիտալ ծախսերը: Հայաստանի Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը տեղեկացրեց, որ գերմանական կողմն ուղղակի, անոնց պետության միջամտության, վարկավորելու է Հրազդանի կասկադի նորոգման ծրագիրը: Լրացուցիչ ֆինանսավորում կլինի 7,2 մլն եվրոյի չափով, որը կուղղվի փոքր ՀԷԿերի վերանորոգման ծրագրին: Այդ գումարից 1,2 մլն եվրոն դրամաշնորհ է:

Ինչ վերաբերում է հայ-գերմանական համագործակցության ընդհանուր ծավալներին, ապա սկսած 1993 թ-ից, գերմանական կառավարության աջակցությունը կազմել է 117 մլն եվրո: Այդ գումարից 17,5 մլն եվրոն վերջին բանակցությունների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններն են: Գումարը տրամադրել է KfW-ը: Նոր վարկերը (15 մլն) եւ դրամաշնորհները (2,5 մլն), բացի ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգի վերականգնումից, ուղղվելու են մասնավոր ձեռնարկատիրության խրախուսմանը, ավանդների երաշխավորման համակարգի, ուսումնասիրությունների եւ փորձագետների 3-րդ հիմնադրամի ստեղծմանը:

Տեխնիկական աջակցությունը տրամադրվել է GTZ-ի կողմից: Այն կազմում է 33 մլն եվրո: Դրանից 5 մլն եվրոն դրամաշնորհ է, որը տրամադրվելու է փոքր եւ միջին ձեռնարկատիրությանը տրամադրվող խորհրդատվությանը, աղքատության հաղթահարման ծրագրի խորհրդատվությանը, համայնքային զարգացման խրախուսմանը, իրավական համակարգի ամրապնդմանը, ուսումնասիրությունների եւ փորձագետների հիմնադրամի միջոցների ավելացմանը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Վաշինգտոնում ստորագրվեց հայ-ամերիկյան համաձայնագիր

Մշակութային արժեքների պաշտպանության եւ պահպանության մասին

Մայիսի 25-ին Վաշինգտոնում ստորագրվել է հայ-ամերիկյան համաձայնագիր՝ մշակութային արժեքների պաշտպանության եւ պահպանության մասին, որը մշակութային ոլորտում առաջին երկկողմ հայ-ամերիկյան համաձայնագիրն է: ՀՀ կառավարության անունից համաձայնագիրը ստորագրել է ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Արման Կիրակոսյանը, ամերիկյան կողմից՝ արտաքին գործերի նախարարի տեղակալ Մարկ Գրոսմանը, պետդեպարտամենտի, ՀՀ դեսպանության եւ Վաշինգտոնի հայ համայնքի ներկայացուցիչներ:

Նշանակություն ունեցող վայրերը, հուշարձանները, ինչպես նաեւ դրանց վերաբերող արխիվային նյութերը:

Համաձայնագրի դրույթներից մեկի համաձայն պետություններից յուրաքանչյուրը կարող են քայլեր ձեռնարկել իր տարածքում գտնվող մշակութային ժառանգության պաշտպանությունն ու պահպանությունն ապահովելու համար եւ համագործակցության հրավիրել մյուս կողմին՝ եւ նրա քաղաքացիներին, երբ այդ նպատակի համար աջակցություն է պահանջվում:

Համաձայնագրի ստորագրման արարողությանը, որը տեղի է ունեցել ԱՄՆ դեպարտամենտի շենքում, ներկա էին պետքարտուղարի տեղակալ Մարկ Գրոսմանը, պետդեպարտամենտի, ՀՀ դեսպանության եւ Վաշինգտոնի հայ համայնքի ներկայացուցիչներ:

Հայաստան կժամանի Լիոնի արքեպիսկոպոս Ֆիլիպ կարդինալ Բարբարեն

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հրավերով մայիսի 27-ին Մայր աթոռ Սբ. Էջմիածին կժամանի Լիոնի արքեպիսկոպոս Ֆիլիպ կարդինալ Բարբարեն: Կարդինալին եւ իր ուղեկիցներին ընկերակցում է Լիոնի շրջանում Հայաստանյայց առաքելական եկեղեցու Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ Նորվան եպս. Զաքարյանը:

Հնգօրյա այցի ընթացքում կարդինալը կայցելի հայկական սրբավայրեր՝ Խոր Վիրապ, Սբ. Գեղարդի վանք, կհյուրընկալվի Շիրակի թեմում, կլինի Երեւանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում, հոգեգալստյան տոնին ներկա կլինի Սբ. Էջմիածնում մատուցվող պատարագին:

Նախատեսվում են նաեւ կարդինալի հանդիպումները ուսանողության եւ աշակերտության հետ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, ԵՊՀ աստվածաբանական ֆակուլտետում, Երեւանի Ֆրանսիական համալսարանում, ինչպես նաեւ մայրաքաղաքի ու Գյումրու ֆրանսիական դպրոցներում: Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողներն առիթ կունենան ունկնդրելու նաեւ կարդինալի դասախոսությունը Սբ. Իրինեոսի մասին:

Լիոնի արքեպիսկոպոսը կայցելի նաեւ Ծիծեռնակաբերդ, ծաղկեպսակ կդնի 1915 թ. Հայոց մեծ եղեռնի զոհերի հուշարձանին, կկատարի ծառատունկ: Կարդինալը կայցելի նաեւ Մատենադարան եւ Աստվածաշնչային ընկերություն:

Հիմնախնդիր

Հայկական ատոմակայան. Եվրոպայի նոր մտահոգությունը

Եվրամիությունը սառեցրել է 100 մլն եվրոյի տրամադրումը Հայաստանին

Եվրամիությունը պահանջում է անհապաղ նշել հայկական ատոմակայանը փակելու կոնկրետ ժամկետ. առաջարկվել է նույնիսկ 100 մլն եվրո շահագործումից հանելու եւ էներգիայի այլընտրանքային միջոցներ հայթայթելու համար: Եվրոպացիների կտրուկ պահանջը նույնքան վճռական դիմադրության է բախվել. հայ մասնագետներն ու պետական կառույցների ներկայացուցիչները տրամագծորեն հակառակ տեսակետներ են արտահայտում:

ՀԱԷԿ-ի ի առաջին բլոկը շահագործման է հանձնվել 1976 թ. դեկտեմբերի 22-ին, երկրորդը՝ 1980 թ. հունվարի 5-ին: Այն կառուցվել է՝ հիմք ընդունելով առաջին սերնդի ատոմակայանների նախագիծը: 1988 թ. սկիզբ առած էկոլոգիական շարժման ճնշման տակ հաջորդ տարվա ծմռանը կանգնեցվեցին 2 էներգաբլոկները: Որոշիչ հանգամանք դարձավ 1988-ի դեկտեմբերյան հզոր երկրաշարժը, որին զոհ գնացին տասնյակ հազարավոր մարդիկ: 1988-92 թթ. հանրաքվեությունը բառացիորեն ընկղմվեց խավարի մեջ, եւ կառավարության որոշմամբ 1995 թ. ատոմակայանը վերագործարկվեց: Այժմ այն առաջնային էներգառեսուրս է Հայաստանի համար եւ հանրապետության կենսագործունեության համար պարզապես կենսական նշանակություն ունի: Ատոմակայանի շահագործման նախագծային ժամկետը լրանում է 2016 թվականին: Ուրեմն ինչո՞ւ է շտապում Եվրոպան, ինչո՞վ է հիմնավորված նրա անհանգստությունը:

«Մենք կարծում ենք, որ ատոմակայանը չպետք է լինի սեյսմիկ տարածքում, քանի որ հարվածի տակ է դնում ողջ տարածաշրջանը: Տեխնիկական պատճառներ էլ կան, քանի որ ատոմակայանը հին սերնդի կառույց է եւ չի համապատասխանում ժամանակակից չափանիշներին», ասում է Եվրամիության հայաստանյան ներկայացուցիչ Ալեքսիս Լյուբերը: Եվրոպացի փորձագետների համոզմամբ, հայկական ԱԷԿ-ը ընդհանրապես նմանատիպ ամենավտանգավոր կառույցն է ողջ աշխարհում:

Եթե նկատի առնենք, որ պատմական Հայաստանը հայտնի է ուժեղ երկրաշարժերով, որոնք որոշակի պարբերականությամբ հիշեցրել են իրենց մասին, ապա Եվրոպացիների անհանգստությունը միանգամայն տեղին է: ԱԷԿ-ի շրջակայքում 10 կմ շառավղով անցնում են Արաքսի եւ մերձերեւանյան խզվածքները: Սպիտակի երկրաշարժից հետո դրանք մանրամասն ուսումնասիրվեցին, եզրակացությունն այն էր, որ որեւէ փոփոխության չեն ենթարկվել: Սակայն սեյսմոլոգներն այսօր ԱԷԿ-ից ոչ հեռու՝ Փարաքար բնակավայրում 5,5 մագնիտուդի սեյսմիկ վտանգ են գնահատում: էլ ավելի մեծ է Գառնիի պոտենցիալը՝ 7,5 մագնիտուդ, Ռիխտերի սանդղակով՝ 9 բալ: Գառնին պատմության մեջ հայտնի է հզոր երկրաշարժով, որ հիմնահատակ ավերեց այս բնակավայրը: Իսկ երկրաշարժերի՝ նույն տարածքում կրկնելիության հավանականությունը սեյսմոլոգիայի համար վաղուց պարզված ճշմարտություն է: Վերջին տասնամյակում ընդերքն ընդհանրապես ակտիվացել է տարածաշրջանում: Հայաստանին սահմանակից Թուրքիայում ու Իրանում անընդմեջ ուժեղ երկրաշարժեր են տեղի ունենում: Գիտնականների պնդմամբ, դրանք այլ խզվածքների տեղաշարժերի հետեւանք են, որոնք ոչ մի կապ չունեն Երեւանի շուրջը եղածների հետ: Բայց իրողություն է նաեւ այն, որ երկրակեղեւում տեղի ունեցող գործընթացները չեն կարող լիարժեք կանխատեսելի լինել, եւ ապացույցը սեսմիկ ակտիվությունն է Հայաստանի ողջ տարածքում: «Այնուամենայնիվ, սեյսմիկ այն ռիսկերը, որ այսօր գնահատվում են Հայաստանում, այնքան էլ վտանգավոր չեն: Բայց երկրաբանական գործընթացները բարդ իրողություններ են, կարող է լինել ուժեղ երկրաշարժ, որ 20-30 տարին մեկ է լինում, ոչինչ չի կարելի երաշխավորել», խոստովանում է Ազգային սեյսմիկ ծառայության պետ Ալվարդ Անտոնյանը: Այս ծառայությունում այսօր մշակվել է վաղ կանխատեսման համակարգ, որի էությունը հետեւյալն է. եթե ԱԷԿ-ից որոշակի հեռավորության վրա երկրաշարժ գրանցվի, 15-20 վայրկյան առաջ տատանումները կհասնեն ատոմակայանի կայանքներին, որոնք ավտոմատ կանջատվեն: Նախագծի արժեքը 1 մլն դոլար է, այն առաջարկվել է ՄԱԳԱՏԷ-ին, եւ ֆինանսավորման դեպքում հնարավոր է իրականացնել: Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնը եւս, Հայրենատոմիսկողության եւ անգլիական Արինս կազմակերպության հետ ատոմակայանի տարածքում հնարավոր աղետի մոդելավորման նախագիծ է մշակում, թե կախված տարվա տարբեր եղանակներից որ կայանքում ինչ միջոցառումներ պետք է իրականացնել: Սակայն այս ամենն առայժմ ընդամենը նախագծեր են:

Ատոմակայանի մասնագետները, սակայն, պնդում են, որ սեյսմակայունության տեսակետից ԱԷԿ-ը բարձր հուսալիություն է ներկայացնում: ՀՀ էներգետիկայի փոխնախարար Արեգ Գալստյանն ընդգծում է, որ ատոմակայանի ռեակտորները՝ իրենց սերնդակից ռուսաստանյան, բուլղարական, սլովակյան ռեակտորների մոդիֆիկացված, սեյսմակայուն տարբերակներն են: Դրանք վերամշակվել ու համալրվել են անվտանգության լրացուցիչ համակարգերով՝ նկատի առնելով Հայաստանի տարածքի առանձնահատկությունները:

Հայաստանի ամերիկյան համալսարանի դասախոս, բնապահպան Չարլզ Դանլափը ներկայացնում է երկրորդ դրդապատճառը, որի համաձայն ատոմակայանի անհապաղ փակումն անխուսափելի է: Նրա անվտանգությունը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, չնայած առ այսօր եվրոպական, ամերիկյան դոնորների հաշվին շուրջ 50 մլն դոլար է ծախսվել այդ նպատակի համար: Նոր սերնդի ռեակտորները, որպես նորմատիվային պարտադիր պահանջ, պատած են բետոնե պաշտպանիչ շերտով, որը ռեակտորի ներսում հնարավոր արտանետումների դեպքում պատնեշելու է արտանետումների հոսքը մթնոլորտ: Հայկական ռեակտորը չունի այդ պաշտպանիչ շերտը, որովհետեւ կառուցվել է հին սերնդի չափորոշիչներով: Իսկ իրականացնել այն այսօր, ԱԷԿ-ի ռադիոակտիվ անվտանգության բաժնի գրասենյակի պետի տեղակալ Կոնստանտին Փյուսֆուլյանի հավաստմամբ, անհնար է եւ ֆինանսապես, եւ տեխնիկապես:

Կա նաեւ երրորդ, ոչ պակաս մտահոգիչ հանգամանքը. ատոմային վառելիքը Ռուսաստանից Հայաստան է տեղափոխվում օդային ճանապարհով: Տրանսպորտային շրջափակման պայմաններում սա փոխադրման միակ հնարավոր միջոցն է: Բայց ինքնաթիռները թռչում են ոչ միայն Հայաստանի երկնքով, եւ այս մտավախությունը անկախ այն բանից՝ որքանո՞վ է իրական, նույնպես հասկանալի է: Սակայն մեր մասնագետները պնդում են, որ ուրանը, քանի դեռ ռեակտոր չի մտել, որեւէ վտանգ չի ներկայացնում, քանի որ լցվում է բազմաշերտ, ջրից ու կրակից հուսալի պաշտպանված սարկոֆագների մեջ: «Եթե նույնիսկ ինքնաթիռը վթարվի, ապա վնասն ավելի փոքր կլինի, քան աղտաստացած ուրանով ռումբ օգտագործելու դեպքում մթնոլորտի աղտոտումը», հավաստացնում է էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Արմեն Սաղաթելյանը:

Ատոմակայանի խնդրին պետական մակարդակով առնչվող մեր պաշտոնյաները հակված են նաեւ բնակչության առողջական պրոբլեմները քննարկելու ատոմակայանի սահմաններից որքան կարելի է հեռու: Քաղցկեղի եւ արյան հիվանդությունների ահռելի աճը ոչ մի կերպ չի կապվում ատոմակայանի գործունեության հետ: Հանրապետությունում հողի, օդի ու ջրի մեջ ռադիոակտիվ նյութերի առատությունը բացատրվում է Հայաստանի՝ բարձր լեռնային գոտի լինելու հանգամանքով: Հայաստանն ամբողջությամբ գտնվում է ռադիոակտիվ վտանգի գոտում, եւ անդրսահմանային աղտոտումներն ուղղակի նստում են մեր լեռների վրա: Բացի դրանից, տարածաշրջանում սեյսմիկ ակտիվացմանը զուգահեռ ռադիոնի արտազատումներ են գրանցվում: Թույլատրելիից 30 տոկոսով ավելի ռադիացիոն անոմալիաներ են գրանցվել Երեւանի հողատարածքներում: Բետա ճառագայթման ակտիվություն է գրանցվել Ակնա լճում: Չարլզ Դանլափը նշում է նաեւ ալֆա ակտիվության արձանագրում նույն լճում: Մյուս կողմից, ատոմակայանի շրջակայքում մոնիտորինգային հետազոտությունները արձանագրում են սիդիում 137-ի արտանետումը: Կոնստանտին Փյուսֆուլյանը, այնուամենայնիվ, դժվարանում է այն կապել ԱԷԿ-ի գործունեության հետ: ԱԷԿ-ի շուրջը ռադիացիոն իրավիճակը նա բացատրում է չեռնոբիլյան վթարի եւ նույնիսկ 50-ական թթ. միջուկային փորձարկումների գլոբալ արտանետումներով:

Մեր մասնագետները համոզված են, որ հողմի, արեւի, կենսագազի էներգիան օգտագործելու դեպքում է հնարավոր ատոմակայանի փակումը: Հայաստանը հարուստ է դրանց պաշարներով: «Սոլարեն» այլընտրանքային էներգիայի խնդիրներով զբաղվող ՍՊԸ-ի գործադիր տնօրեն Վիկտոր Աֆյանը նշում է, որ պաշարագիտական ուսումնասիրությունների համաձայն միայն հողմէներգիան հսկայական ներուժ է՝ 400-450 մգվտ հզորություն, որը կազմելու է ատոմակայանի արտադրած էներգիայի մեկ երրորդը: Սակայն այս ամենը իրականություն դարձնելու համար եւս հսկայական ֆինանսներ են պետք: Մեր պետությունն այս առթիվ 800 մլն դոլարի ներդրման առաջարկ է ներկայացրել Եվրամիությանը, վերջինս դարձյալ մերժել է:

Այդուհանդերձ, անկախ ամեն ինչից, Հայաստանը գտնվում է կովկասյան եռացող տարածաշրջանում, եւ դիվերսիաների ու ահաբեկչության վտանգը, օդից թե գետնի վրայից, չի կարելի բացառել: Հիշենք, որ 1989 թ. Հայաստանին օգնություն բերող հոլանդական ինքնաթիռը վթարվեց ատոմակայանից ընդամենը մի քանի կմ հեռավորության վրա:

Ատոմակայանն այսօր աղտոտվում է Հայաստանում սպառվող էներգիայի մեկ երրորդը: ԱԷԿ-ի փակումը հանրապետության կենսանակի ուղղակի վերադարձ 1988-92 թթ. խավարին: Էներգետիկ ճգնաժամը շատ թանկ արժեցավ մեզ. Սեւանը դարձավ դրա անմիջական զոհը, անխնա ֆամվեց նրա ջուրը: Այլընտրանք չկար, քանի որ անընդմեջ պայթեցվում էր հյուսիսից եկող գազատարը: Եթե ԱԷԿ-ը փակվի, Հայաստանը մնալու է իր ունեցած միակ գազամուղի հույսին, որի տեխնիկական վիճակը այնքան էլ փայլուն չէ: Բացի այդ, ոչ ոք չի կարող երաշխավորել նաեւ, թե Հարավային Կովկասում քաղաքական գործընթացները ինչ հունով կընթանան, եւ գազատարը կրկին պայթեցումների թիրախ չի դառնա:

Հոսանքի արտահանման երկրորդ այլընտրանքային ու իրական միջոցը կարող է լինել Իրան-Հայաստան գազամուղի ստեղծումը: Սակայն Եվրամիությունը սառեցրել է գազամուղի եւ էներգիայի այլընտրանքային աղբյուրների համար խոստացած 100 մլն եվրոյի տրամադրումը, որովհետեւ Հայաստանը այդպես էլ դժվարանում է բանակցել ԱԷԿ-ի փակման գործընթացն սկսելու կոնկրետ օրվա ու ժամի մասին: Մի անգամ կրակից վառված երեխան վախենում է անգամ թույլ բոցից: Հայաստանի ղեկավարությունը չի ուզում առանց էներգաաղահովման իրական հեռանկարի հանրապետությունը մատնել վտանգավոր անորոշության սպառնալիքին:

Սակայն եւ ԱԷԿ-ի փակման ու վնասազերծման, եւ այլընտրանքային աղբյուրների կառուցման աշխատանքները տասնամյակներ կարող են տեւել: Միայն ԱԷԿ-ի վնասազերծումը լիարժեք իրականացնելու համար 1 մլրդ դոլար է անհրաժեշտ: Հայաստանն այսօր այդպիսի գումարներ չունի: Եվրամիությունը՝ կրկին վերջնագիր ներկայացնելով ԱԷԿ-ի փակման կոնկրետ ժամկետ նշելու մասին, սառը անհանդուրժողականություն է արտահայտում: ԱԷԿ-ի պրոբլեմը փակուղի է մտել եւ Հայաստանի, եւ Եվրոպայի համար:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԿԱՐԾԻՔՆԵՐ

Ավանդապա՞հ, թե՞ օտարամոլ

Հաճախ ենք լսում, որ այս սերունդն ավելի օտարամոլ է դարձել, չի հետեւում ազգային սովորույթներին եւ ձգտում է նմանվել օտարազգի երիտասարդությանը: Ճշմարտություն, իհարկե, կա, բայց կան նաեւ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ:

Օտարներն իրենցն են թելադրում մեզ եւ ինչ-որ չափով հեռացնում ազգային արմատներից, մտածելակերպից, ավանդույթներից ու սովորույթներից:

Այսօր աղջիկներն իրենց հագուկապով ձգտում են նմանվել հոլիվուդյան աստղերին կամ արտասահմանյան երգչուհիներին, նույնիսկ չմտածելով, որ կորցնում են հայուհուն բնորոշ ամոթխածությունը: Իսկ տղաներն էլ դիտում են ամերիկյան այնպիսի մարտաֆիլմեր, որոնք արտադրված են լոկ դրամ վաստակելու համար: Այժմյան երիտասարդությունը նախապատվություն է տալիս արտասահմանյան այնպիսի երաժշտությանը, որի ռիթմերն ավելի շուտ ականջ են ծակում, քան շոյում լսելիքը: Նրանց համար նախընտրելի է տնել Ս. Վալենտինը, որ օտար ծագում ունի, քան մեր Ս. Սարգիսը: Այս սերունդը հեշտ ու հանգիստ թողնում է իր հայրենիքն ու բախտը որոնում օտարի հողում՝ հասկանալով, որ հայրենիքը չեն դավաճանում եւ կշեռքի նժարին հայրենասիրությունը չեն դնում:

Իսկ ի՞նչն է պատճառը: Արդյոք միայն երիտասարդնե՞րն են մեղավոր: Ի՞նչն է ստիպում մոռանալ ազգային ավանդույթները: Այս հարցերի պատասխանները փորձեցինք պարզել հենց իրենցից՝ մեծահասակներից ու երիտասարդներից:

Լիանա Խլոյան (31 տարեկան)- Իմ կարծիքով, երկուսն էլ մեղավոր են. մեծերը սովորեցնելու փոխարեն փնովում ու քննադատում են, երիտասարդ

Միջազգային

Այսիսի 20-ին «Ազգը» ընթերցողի ուշադրությանն էր ներկայացրել հայտնի թուրք հասարակագետ, պատմաբան Թաներ Ակչամի «Ակօսում» հրապարակված հոդվածը, որտեղ հեղինակը կարծիք է հայտնում, որ Թուրքիայում բոլոր տաբուները վերացել են՝ բացառությամբ հայկականի: Վերացած տաբուների թվում Ակչամը նշում է երկրում դասակարգերի առկայության, էրդերի գոյության, թուրքական հասարակության վրա իսլամական մշակույթի ազդեցության եւ զինված ուժերի գործունեության մասել է, որ ԵՄ-ին անդամակցելու համար անդամակցող երկիրը եվրոպական պետք է լինի եւ առաջնորդվի եվրոպական արժեքներով, ապա եւ ընդգծել. «Ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Մուսաֆա Քեմալի ժառանգությունը հակասում է ԵՄ-ի արժեքներին»: Պատենը, պայմանավորելով Թուրքիայում խորքային պետության ստեղծումն անմիջականորեն Քեմալ Աթաթուրքի անվամբ, պետականության բեմալական ըմբռնման արդյունք է համարել բանակի անվիճելի դերը կենտրոնում ունեցած ելույթի համար:

Այդ մասին մայիսի 25-ի երեկոյան տեղեկացրել է թուրքական հանրային հեռուստատեսությունը՝ հենվելով Բրյուսելի թղթակցային գրասենյակի տվյալների վրա: Համաձայն այդ տվյալների, Դեմիրալփը նամակում անընդունելի է համարել Թուրքիայում խորքային պետության ստեղծման պայմանավորումը Քեմալ Աթաթուրքի անվամբ, պատճառաբանելով, որ «խորքային պետություն» հասկացությունը երկրում շրջանառության մեջ է դրվել 80-ական թվականներին:

Դեմիրալփը միաժամանակ ընդգծել է, որ Աթաթուրքը Թուրքիայում ստեղծել է ժամանակակից, ժողովրդավարական եւ իրավական հիմքեր ունեցող պետական համակարգ: Ինչ վերաբերում է «երկրի էթնիկ եւ կրոնական փոքրամասնություններին որպես անջատողականների դիտարկելու Քեմալ Աթաթուրքին Պատենի վերագրած պնդումներին», ապա Դեմիրալփը դրանք համարել է թյուրիմացություն եւ հիշեցրել, որ Լոզանի պայմանագիրը Աթաթուրքի օրոք է ստորագրվել եւ ազգային փոքրամասնություններին շնորհել է լայն իրավունքներ:

Պատենի վերոհիշյալ ելույթները դեռեւս Թուրքիայում Քեմալ Աթաթուրքի գործունեության վրա դրված տաբուի վերացում չեն նշանակում: Սակայն վիճարկելով այդ գործունեությունը, ստեղծում են վերացման նախադրյալներ: Հատկանշական է, որ Անկարայի հակազդեցությունն էլ, ինչի արտահայտությունն է դարձել ԵՄ-ում Թուրքիայի մշտական ներկայացուցիչ Դեմիրալփի նամակը, նպաստում է վիճարկումների ծավալմանը: Մնում է սպասել, թե երբ կվերանա Քեմալ Աթաթուրքի գործունեության վրա դրված տաբուն Թուրքիայում:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Թուրքիայում տաբուները վերանում են

Դա կհանգեցնի՞ Քեմալ Աթաթուրքի գործունեության վրա դրված տաբուի վերացմանը

վրա դրվածները՝ ավելացնելով. «Մնացել է 1 տաբու, դա հայկականն է, դրա վերացումը պետական ներկա համակարգի ժողովրդավարացման անհրաժեշտ նախապայմանն է»:

Հայկական ասելով Ակչամը նկատի ուներ Հայոց ցեղասպանության վրա դրված տաբուն, որի վերացմանը Թուրքիայում նպաստում է ինքը: Թե դա ե՞րբ կվերանա՝ դժվար է ասել: Բայց որ երկրում տաբու է դրված նաեւ Մուսաֆա Քեմալ Աթաթուրքի գործունեության վրա, իսկ Ակչամը «Թուրքիայի Հանրապետության 5 գլխավոր տաբուները» թվարկելիս դա մոռանում է, ակնհայտ է: Աթաթուրքի գործունեության վրա դրված տաբուի վերացմանն էլ նպաստում են թուրք իսլամականները, որոնց այդ հարցում ակամա աջակցում են եվրոպական գործիչները:

Այդ գործիչներից պետք է նշել Եվրահանձնաժողովի արտաքին հարաբերությունների գծով պատասխանատու անդամ Քրիս Պատենին, որը Օքսֆորդի իսլամական ուսումնասիրությունների կենտրոնում Եվրամիություն-Թուրքիա հարաբերություններին նվիրված ելույթ է ունեցել եւ խստորեն քննադատել Քեմալ Աթաթուրքի գործունեությունը: Այդ մասին մայիսի 25-ին Օքսֆորդից NTV-ի ինտերնետային էջում տեղեկացնում է թղթակիցը:

Ըստ տեղեկության, Քրիս Պատենն նշել է, որ այդ դերը ոչ մի կերպ չի համապատասխանում ԵՄ-ի արժեքներին:

Բանախոսը ներկաների ուշադրությունը հրավիրել է կրոնական եւ էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ Աթաթուրքի որդեգրած դիրքորոշման վրա: Նա ընդգծել է, որ Աթաթուրքը Թուրքիայում այդ տարրերին ընկալում էր որպես անջատողականների եւ կառավարման զինվորական մեթոդներով կարողանում էր իշխել նրանց վրա:

Եվրահանձնաժողովի արտաքին հարաբերությունների գծով պատասխանատու անդամ Քրիս Պատենը, այնուամենայնիվ, արտահայտվել է ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության օգտին եւ դա պատճառաբանել քաղաքակրթությունների երկխոսության, ինչպես նաեւ քրիստոնյա-մահմեդական շփումների անհրաժեշտությամբ:

Պատենի ելույթը, ինչպես որ ենթադրվում էր, բուռն հակազդեցություն առաջ բերեց Անկարայում: Նույն օրը, այսինքն՝ մայիսի 25-ին պաշտոնական Անկարան, ի դեմս ԵՄ-ում Թուրքիայի մշտական ներկայացուցիչ, արտակարգ եւ լիազոր դեսպան Օղուզ Դեմիրալփի, պաշտոնական նամակ հղեց Քրիս Պատենին եւ դատապարտեց նրան Օքսֆորդի իսլամական ուսումնասիրությունների կենտրոնում ունեցած ելույթի համար:

Այդ մասին մայիսի 25-ի երեկոյան տեղեկացրել է թուրքական հանրային հեռուստատեսությունը՝ հենվելով Բրյուսելի թղթակցային գրասենյակի տվյալների վրա: Համաձայն այդ տվյալների, Դեմիրալփը նամակում անընդունելի է համարել Թուրքիայում խորքային պետության ստեղծման պայմանավորումը Քեմալ Աթաթուրքի անվամբ, պատճառաբանելով, որ «խորքային պետություն» հասկացությունը երկրում շրջանառության մեջ է դրվել 80-ական թվականներին:

Դեմիրալփը միաժամանակ ընդգծել է, որ Աթաթուրքը Թուրքիայում ստեղծել է ժամանակակից, ժողովրդավարական եւ իրավական հիմքեր ունեցող պետական համակարգ: Ինչ վերաբերում է «երկրի էթնիկ եւ կրոնական փոքրամասնություններին որպես անջատողականների դիտարկելու Քեմալ Աթաթուրքին Պատենի վերագրած պնդումներին», ապա Դեմիրալփը դրանք համարել է թյուրիմացություն եւ հիշեցրել, որ Լոզանի պայմանագիրը Աթաթուրքի օրոք է ստորագրվել եւ ազգային փոքրամասնություններին շնորհել է լայն իրավունքներ:

Պատենի վերոհիշյալ ելույթները դեռեւս Թուրքիայում Քեմալ Աթաթուրքի գործունեության վրա դրված տաբուի վերացում չեն նշանակում: Սակայն վիճարկելով այդ գործունեությունը, ստեղծում են վերացման նախադրյալներ: Հատկանշական է, որ Անկարայի հակազդեցությունն էլ, ինչի արտահայտությունն է դարձել ԵՄ-ում Թուրքիայի մշտական ներկայացուցիչ Դեմիրալփի նամակը, նպաստում է վիճարկումների ծավալմանը: Մնում է սպասել, թե երբ կվերանա Քեմալ Աթաթուրքի գործունեության վրա դրված տաբուն Թուրքիայում:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Ամերիկյան զորքը չի ենթարկվի Իրաքի ապագա կառավարությանը

ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը երեքշաբթի օրը Վաշինգտոնում հայտարարել է, թե ԱՄՆ-ը Իրաքում տեղաբաշխված ամերիկյան զորքերի վերահսկողությունը պահպանելու է նաեւ իշխանափոխությունից, այսինքն հունիսի 30-ին Իրաքի ժամանակավոր կառավարության ստեղծումից հետո: Այս մասին հաղորդելով, BBC-ն ընդգծում է, որ Փաուելի խոսքերը հակասում են ավելի վաղ Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերի արած այն հայտարարությանը, թե իրաքցիները հունիսի 30-ից հետո կկարողանան իրենց երկրում «լիովին վերահսկել» ռազմական բոլոր գործողությունները եւ վետո դնել կոալիցիոն ուժերի ռազմական գործողությունների վրա:

Հակաիրաքյան կոալիցիայի գլխավոր երկրների՝ Մեծ Բրիտանիայի եւ ԱՄՆ-ի միջեւ տվյալ հարցում ծագած տարաձայնությունները կարող են դժվարացնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Իրաքի վերաբերյալ ամերիկացիների եւ բրիտանացիների ներկայացրած նոր բանաձեւի ընդունումը: Առանց այդ էլ Անվտանգության խորհրդում վետոյի իրավունք ունեցող որոշ երկրներ, մասնավորապես Ֆրանսիան եւ Ռուսաստանը, պնդում են, թե ներկայացված բանաձեւի նախագիծը չլուծված է թողնում մի շարք հարցեր, ուստի պետք է լրամշակվի:

Իրաքի կառավարման ժամանակավոր խորհուրդը ընդհանուր առմամբ հավանություն է տվել բանաձեւի նախագծին, բայց շարունակում է պնդել, որ բանաձեւի վերջնական տեքստում Իրաքի իշխանություններին տրվի երկրից օտարերկրյա զորքերի դուրսբերումը պահանջելու իրավունք:

Գազայում իսրայելական բանակն անօթեւան թողեց 2000 պաղեստինցիների

Մայիսին Գազայի հատվածում իսրայելական բանակի իրականացրած «Ծիածան» գործողության հետեւանքով 2000 պաղեստինցիներ մնացել են անօթեւան: ՄԱԿ-ի պաղեստինցի փախստականների գործերի վարչության տվյալները վկայակոչելով BBC-ն հաղորդում է, որ միայն անցյալ շաբաթ ավերվել է 45 տուն:

Իսրայելի իշխանությունները պնդում են, թե գործողության նպատակն է եղել այն գետնուղիների ոչնչացումը, որոնցով պաղեստինցիները զենք ու զինամթերք էին ստանում Եգիպտոսից: Իսրայելցիներն ասում են, թե Գազայում հայտնվել են հեռահար հրթիռներ եւ հրթիռակայաններ: Երկուշաբթի օրն Իսրայելը հայտարարեց, թե դադարեցնում է «Ծիածան» գործողությունը եւ զորքը դուրս է բերում Ռաֆահ քաղաքից: Անցյալ շաբաթ Գազայի հատվածում մարտերի ընթացքում զոհվեցին 45 պաղեստինցիներ:

Իսրայելը հայտարարել է, որ իր զորքը լոկ «դադար է տալիս», եւ որ Գազայում ռազմական գործողություններն ընդհատվում են ժամանակավորապես: Ավելի վաղ ՄԱԿ-ը եւ արաբական երկրների ղեկավարները դատապարտել էին իսրայելական բանակի գործողությունները: ՄԱԿ-ն ընդունել էր այդ գործողությունները դատապարտող հատուկ բանաձեւ:

«Եթե ռուսաստանցի լինեի, չէի վստահի ԱՄՆ-ին»

Պնդում է կոնգրեսական Ուելդոնը

Ամերիկյան պաշտպանական տարբեր գերատեսչությունների ղեկավարների պատվիրակության կազմում Ռուսաստան այցելած կոնգրեսական Կուրտ Ուելդոնը «Վրեմյա նովոստեյ» թերթի թղթակցին հայտարարել է, որ ԱՄՆ-ը շահագրգռված է հակահրթիռային պաշտպանության պայմանագրով (ՀՊՊ) արգելված խորհրդային ռադարների վերականգնմամբ: Նրա խոսքերով, խոշոր ռադարները «կվերականգնվեն ամերիկացիների օգնությամբ, եւ այդ դեպքում հակահրթիռային պաշտպանության համակարգը կդառնա ընդհանուր»:

Ուելդոնը նաեւ ասել է, որ ԱՄՆ-ը շահագրգռված է զանգվածային բնաջնջման զենքի ոչնչացման աստիճանում Ռուսաստանի փորձի օգտագործմամբ, մասնավորապես՝ Լիբիայում եւ ԿԺԴՀ-ում: Նա առաջարկել է նոր խողովակաշար կառուցել եւ ռուսական էներգակիրները հասցնել Կորեական թերակղզի, Ճապոնիա եւ Չինաստան:

Կոնգրեսականը քննադատել է Ռուսաստանի նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը: «Եթե ռուսաստանցի լինեի, չէի վստահի ԱՄՆ-ին: ՆԱՏՕ-ն մոտեցրինք Ռուսաստանի սահմաններին, չեղյալ հայտարարեցինք ՀՊՊ-ն, ներխուժեցինք Սերբիա: Ստածում էինք, թե Ռուսաստանն այսօր մեր բարեկամն է, իսկ վաղը մենք նրան կօգտագործենք», հայտարարել է Ուելդոնը:

Միխայիլ Խոդորկովսկու ձերբակալման առնչությամբ ամերիկացի կոնգրեսականն ասել է. «Երեւի այս գործն ունի քաղաքական երանգավորում: Բայց ինքս ինձ հարց եմ տալիս. մարդն ինչպե՞ս կարող էր 3 տարում 8 միլիարդ դոլարանոց ունեցվածք ստեղծել, ընդսմին չվճարելով համապատասխան հարկեր: Թե ռուսաստանցիների տեղը լինեի, ես էլ կուզենայի, որ Աբրամովիչի եւ Խոդորկովսկու նմանները վճարեին իրենց հարկերը»:

Վրաստանի քաղաքացիություն՝ արտերկրի բոլոր վրացիներին

«Ելնելով Վրաստանի շահերից, ես որոշեցի Վրաստանի քաղաքացիություն շնորհել արտերկրում ապրող բոլոր վրացիներին, անկախ այն բանից, թե ներկայումս նրանք որ երկրի քաղաքացի են», ասել է Վրաստանի նախագահ Սաակաշվիլին մայիսի 26-ին՝ երկրի անկախության օրվան նվիրված տոնական շերթի ժամանակ:

Նրա խոսքերով, երկրի սահմանադրությունն իրեն ընձեռում է նման իրավունք: Նախագահն արտերկրում ապրող վրացիներին կոչ է արել իշխանություններին դիմել Վրաստանի քաղաքացիություն ստանալու համար:

Սաակաշվիլին ասել է, թե «հինգ վրացուց մեկը հայրենիից հեռացել է պատերազմի, ավերումների եւ անհեռանկարայնության պատճառով»: Նրանց վերադարձը համարելով «կարեւորագույն, անհետաձգելի եւ պատմական խնդիր», նախագահը կոչ է արել միացյալ ուժերով ոտի կանգնեցնել Վրաստանը: Նրա կարծիքով, ժողովրդի կրած փորձությունների գլխավոր պատճառը տարանջատվածությունն է:

ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ շերթի ժամանակ հնչել է մայիսի 21-ին Վրաստանի խորհրդարանի ընդունած եւ վրաց պատրիարքի հավանությանն արժանացած նոր պետական օրհներգը:

Լատվիայում ՊԱԿ-ի արխիվները չեն բացվի

Լատվիայի նախագահ Վայրա Վիկե Ֆրեյբերգան վետո է դրել այն օրենքի վրա, որը պետք է ՊԱԿ-ի արխիվները բացեր հանրության առջեւ: Խորհրդարանն այդ օրենքն ընդունել էր անցյալ շաբաթ: Խոսքն առաջին հերթին ՊԱԿ-ի աշխատակիցների քարտադարանի գաղտնազերծման մասին է:

ՌԻԱ գործակալությունը մասնագետների տվյալները վկայակոչելով հաղորդում է, որ 1953-1991 թթ. հանրապետությունում արձանագրված են եղել հատուկ ծառայությունների 25 հազար գործակալներ, բայց 1980-ական թթ. վերջերին ՊԱԿ-ի փաստաթղթերի մեծ մասը դուրս է բերվել Լատվիայից:

Մինչեւ օրս Լատվիայի քաղաքացիները կարողացել են ծանոթանալ միայն սեփական գործերին: Պետարարատում կամ մի շարք գերատեսչություններում աշխատանքի ընդունելիս մարդկանց անցյալն էական դեր է խաղացել: Հաղորդվում է, որ ՊԱԿ-ի արխիվը շուտով հանձնվելու է Ռիգայի ամբողջատիրության հետեւանքների վավերագրերի կենտրոնի տնօրինությանը: Կենտրոնի ղեկավար Ինդուլիս Զալիտեն կողմ է արխիվի բացմանը, բայց միաժամանակ նշում է, որ 1940-1950-ական թթ. հալածանքների գլխավոր մեղսակիցների գործերն արդեն Մոսկվայում են, իսկ քարտադարանում մնացած ՊԱԿ-ի աշխատակիցների 85 տոկոսը եղել են հասարակ ծառայողներ:

Ինտերպոլը կոպյարի կեղծված ապրանքների շրջանառության դեմ

Ոստիկանության միջազգային կազմակերպությունը՝ Ինտերպոլը եւ Համաշխարհային մաքսային կազմակերպությունը Բրյուսելում անցկացնում են կեղծված արտադրանքին եւ «սեւ շուկայի» խնդրին նվիրված խորհրդաժողով, որն այդ կարգի առաջին միջոցառումն է: BBC-ն հաղորդում է, որ հանդիպմանը մասնակցում են պետական մարմինների եւ մասնավոր հատվածի ներկայացուցիչներ: Գլխավոր նպատակը պայքարն է կեղծված ապրանքների շրջանառության դեմ, որի ծավալներն արժեքային արտահայտությամբ այսօր գնահատվում են 600 միլիարդ դոլար:

Ինտերպոլի տվյալների համաձայն, կեղծված ապրանքների վաճառքից ստացվող եկամուտների զգալի մասը թերեւս հատկացվում է Մերձավոր Արեւելքում, Եվրոպայում եւ Լատինական Ամերիկայում ահաբեկչական գործունեության ֆինանսավորմանը: Ոստիկանության միջազգային կազմակերպությանը նաեւ հայտնի է դարձել, որ կեղծված ծխախոտի եւ խտասկավառակների վաճառքից Հյուսիսային Իռլանդիայում ստացվող եկամուտներից օգտվում է պաղեստինյան «Հզբոլլահ» զինյալ կազմակերպությունը:

Համաժողովի մասնակիցները ընդգծում են, որ կեղծված ապրանքները, նյութականից բացի, վնաս են պատճառում նաեւ մարդկանց առողջությանը: Կազմակերպիչների կարծիքով, ապրանքների կեղծման դեմ մղվող պայքարն արդյունավետ դարձնելու համար հարկավոր է համակարգել կառավարությունների, իրավապահ մարմինների եւ գործարար շրջանակների ներկայացուցիչների գործողությունները: Մասնավորապես Ինտերպոլի գլխավոր քարտուղար Ռոնալդ Նոբլը կառավարություններին կոչ է անում առավել ակտիվորեն դիմակայել «սեւ շուկային», օգտագործելով նաեւ Ինտերպոլի հնարավորությունները:

Պ. Բ.

Մշակույթ

Կրկին «Աշնան արեւը» եւ Վիոլետա Գեւորգյանը

Այո, կրկին եւ տոն ու եթե ներկա չլինեի, չտեսնեի՝ չէի հավատա, թե այսօր մեր հանդիսատեսի հոգում այսքան սեր կա թատրոնի եւ դերասանի հանդեմ: Եվ առաջին ներկայացումները չէին, որ կարծեիր թե ծանոթ-բարեկամներն են. հինգերորդ ներկայացումն էր եւ կրկնվում էր նույնը. ծաղիկ ու ծաղկեփունջ են տալիս ու չեն ուզում լքել հանդիսասրահը: Ներկայացումից հետո մեկ այլ ներկայացում է սկսվում, ու ավելի մեծ հույզ ու դրամատիզմ կա: Գլխավոր հերոսուհին արձանանում է բեմում եւ նրա աչքերից հոսում ու հոսում են արցունքները... Հանդիսատեսն էլ է լալիս, չի ուզում լքել այս ջերմ, թանկ դարձած տրահը...

Քանի որ է տենդագին փնտրում եմ ոգեշնչան. ինչի՞ց է, մի՞թե մենք ուրիշ, սիրելի դերասանուհիներ եւ հուզիչ ներկայացումներ չունենք՝ արժանի ջերմ վերաբերմունքի: Սա ուրիշ հարց է, իսկ առայժմ անհերքելին այն է, որ հանդիսատեսը տակավին սիրում է եւ կարոտել է դերասանուհուն՝ Վիոլետա Գեւորգյանին: Իսկ գուցե նաեւ նրա հերոսուհո՞ւն՝ Աղունին: Փնտրեմ մեր վերջին կեսդարյա թատերագրության մեջ. կգտնե՞մ հայ կնոջ այսօրինակ ճշմարտացի, ամբողջական ու հմայիչ տիպար: Ականջդ ծեն տա, Հրանտ Մաթեւոսյան. ինչպե՞ս տեսար ու մեզ մատուցեցիր քո խուլ ու հեռավոր Ծմակուտի այս որբուհուն, որ թանձրացում դարձավ ժամանակակից հայուհու: Այստեղ է, որ պիտի հիշենք վիպակը բեմականացնող Վ. Թումասյանին եւ բեմադրիչ Արտաշես Հովհաննիսյանին, քանզի այլ կերպ ոչ բեմը, ոչ հիանալի դերասանուհին, ոչ էլ անցած ու ներկա հանդիսականները չէին ունենա մտորելու, հուզվելու, բերկրելու անօրինակ ու անվերջանալի պահեր: Ինչ հանդարտ ու անկեցվածք է ռեժիսոր Արտաշես Հովհաննիսյանը փռում է իր պատումը, այնքան առօրեական, որ կարծես դրսում տեսածիդ շարունակությունն է: Բայց քայլ առ քայլ տանում է խորը, ճանաչ դարձնում իր հերոսներին, որոնց դերակատարները՝ համախոհ բեմադրիչին, անճիգ ու անշտապ բացում են իրենց սովորական կյանքի ծալքերը, որտեղ պատահեցնող կամ զարմացնող ոչինչ չկա, բայց կան բաներ, որ լար են հյուսում քո ստի հետ ու գբաղեցնում, մտահոգում քեզ: Ահա եւ հավերժ մարդկային-բարոյականը, որ ժամանակին հուզել է հեղինակին, իսկ հետո նաեւ թատրոնին ու հանդիսականին: Տեսեք, թե ինչ սովորական կենցաղի գյուղական իրեր կան, որոնք բերում են միջավայր, կենսակերպ, բարքեր ու պատմություն: Արուսի տան պատին կարպետ կա, որ գուցե հենց ինքն է գործել: Գյուղական տնամերձը երիզող ցանկապատը ծռված է ու հին. կնճանակե տերերն ի վիճակի չեն դրանով զբաղվելու:

Ճիշտ է վարվել բեմադրիչը՝ վերականգնելով նախորդ բեմադրությունը՝ բոլոր բաղադրիչներով, քանզի այն ամբողջական էր, ավարտուն եւ ոչ միայն շարժել էր ճնաղատների հիացմունքը, այլեւ արժանացել պետական մրցանակի: Բնական է եւ այսօրվա խնդիրների դիտանկյունից ինչ-որ մտքեր, գույներ խտացնելու կամ մեղմելու միտումը, սակայն հիմնականում բեմադրիչը պահպանել է իր համար թանկ այս ստեղծագործության հիմնական ներքին ու արտաքին կերպարը: Միայն մի բան է հավելել բեմական միջավայրի լուծմանը, որը, մեր կարծիքով, նոր մի խորհրդանիշ է բերում: Այցի գնալով Մաթեւոսյանի հայրենի գյուղը, Արտաշես Հովհաննիսյանը «պեղել» է նրա նախնիների հին կշեռքը, մաքրել, բարեսեւ դարձրել ու հարմար է գտել կախ տալ Արուսի տան պատի կարպետին... Ամեն ինչ անցյալում թողած եւ անուրախ կյանքով ապրող պառավն ավելի, քան մեկ ուրիշը, հակատես է կորցրածն ու գտածը նժարելու խոհերի: Բեմադրիչի սերն իր երախայրիքի հանդեպ արտահայտվում է նաեւ տարիների ընթացքում ձեւավորման բաղադրիչները պահելու-պահպանելու մեջ. գուցե մի որ դարձյա՞լ պետք կգա... Իզձ թե կանխատեսում. համենայն դեպս ականատես ենք բաղձալիի իրականացմանը: Այնպես, որ ժամանակին նկարիչ Ռաֆֆի Ադալյանի հետ մտահղացած ձեւավորումը մեզ հաճելի վերհուշով փոխադրում է պատումի ափխարհը: Նույն գունաթափ, ծռված ցանկապատը, Աղունի պատշգամբով՝ բարեսեւ տունը, աջում՝ Արուսի տան կահ կարասին: Իսկ բակի աջակողմյան մասում՝ սայլի անիվն ու հյուսնի գործիքները սկզբից ելեք «խաղի մեջ են մտնում». Ադամը անիվն է նորոգում: Բեմադրիչը հենց սկզբից որքան էլ «աննկատ» մատուցում է տան բնակիչներին՝ միմյանց հանդեպ ունեցած փոխհարաբերություններով: Մինչ Արուսը մի երկու խեթ հայացք է նետում հարսի կողմը, Ադամը բարեհոգի արձագանքում է հարսին, համերաշխ ընդունում նրա ծաղրն ու կատակը: Այստեղ հանդարտ, հոգեբանական զննումների ու հեղինակի խոսքի հանդեպ համակ սիրով ու ակնածանքով, բեմադրիչը ծավալում է իր պատումը՝ թեեւ առանց ավանդական դրամատիկ գործողության, սակայն հոգեկան լծակները կարեւորելով, երբեմն դրվագից ու բառերից գործողություն է ստեղծում, կիրառում բեմական տարողունակ լուծումներ ու ընդգծումներ, որոնց շնորհիվ տեղի է ունենում երկու կարեւորագույն մեծություններ՝ կյանքի ու բեմի ճշմարտության միաձուլում, տարրալուծում:

Բեմադրիչի հուզիչ համախոհությամբ նրա դերասանախմբի ջանքերով կատարվում են հերքումներ ու հաստատումներ, որոնք մեկ եւ կես ժամ հանդիսատեսը ծուլված են պահում բեմին: Դիտելով նորընծա դերակատարների հավատով ու անկեղծությամբ ցողված անձնավորումները, չես ասի, թե այնքան կարճ ժամկետում են դրանք պատրաստվել. քանզի բոլորն էլ այնքան ճիշտ են իրացնում ռեժիսորական խնդիրները եւ մնում արտահայտման երանելի գեղարվեստական չափի մեջ, որը ոչրոֆեսիոնալ ենք կոչում՝ նախապատվելի: Շատ բան չի անում Փայլակ Չոբանյանը. բայց դու ճանաչում ես նրան մեղմ խոսքից, կոտրված ժպիտից, վեհերոտությունից զգում, որ լոկ պոռթկումով լացախառն աղաղակում (հաշտ ու խաղաղ ապրելու հեծեծանք) հասնում է իսկական դրամատիզմի եւ կարեկցանք կորզում իր հերոսուհու հանդեպ: Այդ նշանակում է, որ դերասանուհին հասել է կերպարի «միջուկին». սահման, որ արդարացնում է նույնիսկ դեպի կերպար տանող ոչ այնքան խրախուսելի ուղիները:

Նվազ կարեւոր արժանիք չէ նաեւ գլխավոր դերակատար Վ. Գեւորգյանի Աղունի հետ միանգամայն ընդունելի բեմական զուգախաղ ստեղծելու Գյուլբեկյանի կարելիությունը: Ինչպես այս երկուսին, այնպես եւ պատումի ամենակրտսեր դերակատարին (Ալբերտ Եգեկյան) հատուկ է ռեժիսորական խնդիրների ստույգ կատարումը՝ կերպարին ընծեռված տարածքը բարեկիրթ ու հավատի իմաստավորելու հրամայականը: Բեմադրության բարդ ու դժվարին կերպարներից մեկը Սիմոնն է: Որքա՞ն են հոլովվում «Սիմոն, Սիմոնացու» բառերը. Հրանտ Մաթեւոսյանին հոգեհարազատ, խորհուրդ կերպարներից մեկը, որի դրամատուրգիական մտակմանը հանդիպել ենք «Չեզոք գոտի» հեռ. բեմադրության մեջ՝ վաղամեռիկ Վլադիմիր Քոչարյանի նուրբ տաղանդով ու հոգեվին անձնավորումով (Սիմոնն օրն ի բուն խաչքարն է հոկում...): Այստեղ Սիմոնին դեռեւս շարունակում է հոկել-կերտել Աղունը, մարդավարի նիստուկաց, ապրել հետ խաղում: Սիրտը բարի է, զավակներին, տուն-տեղին կապված: Սիմոնը հոգնած, ուժահատ է. ի դեմ, այդ հոգնածությունը բնորոշ է Մաթեւոսյանի գեղջկական բոլոր կերպարներին եւ սոցիալական ամուր հիմք ունի: Սիմոնի, ի դեմ, նաեւ Աղունի դերակատարները նրբորեն են հաղորդում տարիների համատեղ կյանքով, զավակներով ստեղծված մտերմությունը, ինչ-որ տեղ նաեւ կենցաղով զոդված սերը:

Սարգսյանը հաղորդում է ոչ միայն Սիմոնի հոգնածությունը, որ անտարբերություն է նաեւ, այլեւ ապահովության զգացումը, երբ կողքին Աղուն կա: Կարող է անտարբեր վեր ընկնել մի տեղ ու քուն մտնել. գիտե, որ Աղունն անպայման կծածկի, որովհետեւ մայրությունն է Աղունի հիմնորոշ գծերից մեկը. մայր է բոլորի համար, ասել է՝ հոգատար է ու կարեկից: Տեսնում է չէ, ինչպես է նա կարգին հարսի պես նստում զրուցում սկեսրոջ հետ, նրա ասելը թելում: Որքան էլ հոգու հետ խաղա՝ միեւնույն է, երբ հոգնած տուն է մտնում, գդակն առնելն ու գլխին դնելը եւ համբերությամբ ծեռքերին ջուր լցնելն ինչ ասես արժե... Արդարեւ. այս դրվագում այնքան առինքնող է՝ ժպիտով ամուսնուն նայող, դիտմամբ ծեռքերին ջուր լցնելն ուշացնող, գողունի սպասող ու շվարած ամուսնուն ժպիտով դիտելը... Ինչ-որ տեղ այս բոլոր կերպարները ծառայում են Աղունի կերպարի առավելագույն բացահայտմանը: Նույնիսկ կրտսեր որդու (Սերո-Ալբերտ Եգեկյան) հետ ունեցած տեսարաններում այնպիսի խորքով է բացահայտվում մայրը, թեեւ դեմ չէ, գյուղից դուրս գալու, Երեւան գնալու նրա երազանքին: Բայց այ, Արմենակն էլ գնաց. ամիսներով որդուն չի տեսնում: Այնպես է արտաբերում նրա անունը, ասես պոռը պատռվում է կուրծքից: Ի՞նչ է ուտում, ո՞նց է ապրում, ի՞նչ հաջողություն կունենա կյանքում, տեսնես ի՞նչ ցեղի աղջիկ է ընտրածը... Վիոլետա-Աղունի սիրտը կեղեքվում է նաեւ Երեւան ասելուց... Այդ քաղաքն է, որ գերում-տանում է գավակներին... Բայց Աղունը նեղսիտ չէ եւ գիտե, որ միայն գյուղից դուրս գալով կարելի է կարգին մարդ դառնալ. մնացողինը միայն հանդն ու անասունն են:

սովորեցնել: Բայց այս ծերացող, հոգնած ու հիվանդ տառապյալից ի՞նչ պահանջես: Արա Սարգսյանի Սիմոնը լավ է ճանաչում կնոջը, նրա բարոյական բարձր արժանիքները եւ գիտե, որ ամբողջ տունը, հանդն ու անասունը նրա ջանքերով ու խելքով է պահվում: Սա չլինի՝ բոլորը կորած են: Ոչինչ, որ շատ է խոսում, սովորեցնում նիստ ու կաց, հոգու խոսք չէ, թե նա պատերազմում արյուն ու գերություն է տեսել, հետո էլ՝ ախտոր... Միանշանակ չես արժեւորի Գյուլբեկյանի Արուսի դերակատարումը: Բեմական բարդ անցումներով ու «զիգզագներով» այս կերպարի իրարամերժ, երեւացող ու նաեւ չերեւացող հոգեդրսեւորումներն այնքան ռեբուսային են, որ սեղմ ժամկետում չէր կարող հաղթահարել: Երիտասարդ դերակատարը կերպարին հասնելու «արդյունավետ» ուղին գտել է նախորդ դերակատարին՝ Ժասմեն Մարյանին ընդօրինակելը: «Ընդօրինակելը» մերժելի հասկացություն է արվեստում, բայց կան եւ ուրիշ գործոններ. անփորձություն, ստեղծագործական ուղու այլընտրանք, սուղ ժամկետում որոշակի արժեք ստեղծելու պարտադրանք: Իհարկե, նաեւ՝ թե որքանո՞վ է ընդօրինակումը ինչ-որ կտրվածքներում վերածվել սեփականի: Սա ստուգելու աներկբա միջոցը հույզն է: Միանգամայն արտահայտիչ լինելով հարսի հետ վեճուկռվի հատվածներում, որոնք յուրացված լավ դասի պես են մատուցվում, հարկավոր տպավորությունն ստեղծում են, բայց Արուսն ունի «ապիին» ու անցյալի լավը հիշելու պահեր, որ Գյուլբեկյանն անկեղծության

հետ խաղում: Սիրտը բարի է, զավակներին, տուն-տեղին կապված: Սիմոնը հոգնած, ուժահատ է. ի դեմ, այդ հոգնածությունը բնորոշ է Մաթեւոսյանի գեղջկական բոլոր կերպարներին եւ սոցիալական ամուր հիմք ունի: Սիմոնի, ի դեմ, նաեւ Աղունի դերակատարները նրբորեն են հաղորդում տարիների համատեղ կյանքով, զավակներով ստեղծված մտերմությունը, ինչ-որ տեղ նաեւ կենցաղով զոդված սերը:

Սարգսյանը հաղորդում է ոչ միայն Սիմոնի հոգնածությունը, որ անտարբերություն է նաեւ, այլեւ ապահովության զգացումը, երբ կողքին Աղուն կա: Կարող է անտարբեր վեր ընկնել մի տեղ ու քուն մտնել. գիտե, որ Աղունն անպայման կծածկի, որովհետեւ մայրությունն է Աղունի հիմնորոշ գծերից մեկը. մայր է բոլորի համար, ասել է՝ հոգատար է ու կարեկից: Տեսնում է չէ, ինչպես է նա կարգին հարսի պես նստում զրուցում սկեսրոջ հետ, նրա ասելը թելում: Որքան էլ հոգու հետ խաղա՝ միեւնույն է, երբ հոգնած տուն է մտնում, գդակն առնելն ու գլխին դնելը եւ համբերությամբ ծեռքերին ջուր լցնելն ինչ ասես արժե... Արդարեւ. այս դրվագում այնքան առինքնող է՝ ժպիտով ամուսնուն նայող, դիտմամբ ծեռքերին ջուր լցնելն ուշացնող, գողունի սպասող ու շվարած ամուսնուն ժպիտով դիտելը... Ինչ-որ տեղ այս բոլոր կերպարները ծառայում են Աղունի կերպարի առավելագույն բացահայտմանը: Նույնիսկ կրտսեր որդու (Սերո-Ալբերտ Եգեկյան) հետ ունեցած տեսարաններում այնպիսի խորքով է բացահայտվում մայրը, թեեւ դեմ չէ, գյուղից դուրս գալու, Երեւան գնալու նրա երազանքին: Բայց այ, Արմենակն էլ գնաց. ամիսներով որդուն չի տեսնում: Այնպես է արտաբերում նրա անունը, ասես պոռը պատռվում է կուրծքից: Ի՞նչ է ուտում, ո՞նց է ապրում, ի՞նչ հաջողություն կունենա կյանքում, տեսնես ի՞նչ ցեղի աղջիկ է ընտրածը... Վիոլետա-Աղունի սիրտը կեղեքվում է նաեւ Երեւան ասելուց... Այդ քաղաքն է, որ գերում-տանում է գավակներին... Բայց Աղունը նեղսիտ չէ եւ գիտե, որ միայն գյուղից դուրս գալով կարելի է կարգին մարդ դառնալ. մնացողինը միայն հանդն ու անասունն են:

Հանդիսատեսի սրտից թել է ձգում դերասանուհին, երբ խոսում է իր վերջ չունեցող կարոտներից ու սպասումներից: Ամբողջ կյանքն է եղել կարոտի կուսակ: «Ընչի՞, ընչի՞». այս հարցերը ռեֆրենի պես կրկնվում են ու հառաչ պոկում սրտից... Հնարավո՞ր է անհաղորդ մնալ, երբ Վիոլետա-Աղունը հիշում է որբ մանկությունը, խորթ մոր հալածանքը, հետո էլ ամուսնու մեծ ու փոքր հարազատների չարությունը, որ նրան մղում էր ինքնասպանության... Ուշացող ավտոմեքենայի առիթով սրված նյարդերը կնոջը քրքրում ու շարունակ նետում են բգկտող հուշերի գիրկը... եւ կերպարը դառնում է խորապես դրամատիկ ճակատագիր:

Ինձ թվաց, թե այս անգամ Վիոլետան խաղում է «սանձերը պոկած»: Կարծես չարության բաժինն ավելի էր, քան չարաճճիությունը: Գիտեմ, որ անձնավորման ընթացքը բարդ է՝ երբեմն պայմանավորված օրվա տրամադրությամբ, ինչ-որ միջադեպով, մեծ ու փոքր մանրուքով, որ կարող է վաղուց կայունացած գծանկարի մեջ թափանցել գույն ու երանգ, որ ներհատուկ չէ կերպարին: Հնարավոր է, համենայն դեպս, շատ կուզեի, որ մեր սիրելի Վիոլետան, որքան էլ հարստանա փորձով ու հմտությամբ, ջանա պահպանել նախասկզբնականի մաքրությունը, այս պարագայում՝ բեմադրական խնդիրներին հավատարմությունը, այն ամենին, որ մեր մեջ հիացումի ու կատարյալի զգացողություն է հարուցում: Դարձն առավել հակատես է նոր հարստության, նրբացման ու խորության, քան հակադարձին: Դրա շահեկան օրինակը հենց այս բեմադրության ռեժիսորն է տվել:

«Աշնան արեւի» նախորդ պատումն ավարտվում էր այսպես ասած ընտանեկան դիմանկարով: Գործող անձինք մի փոքր մոտենում էին ու արձանանում՝ մանսուրյանական ֆոտոաթախիծ մեղեդայնության տիրույթում: Այս անգամ այլ էր լուծումը՝ ակնթախորեն թելադրված այսօր հայերիս համար գերխնդիր դարձած մի հրամայականով: Թախտին ու օտարը կիսված բեռներին մոտենում ու գլուխ-գլխի փլվում-նստում են պատումի հերոսները. միասնաբար կրելու Աղունի վիշտը, ավտոմեքենայի չգալու եւ Երեւան՝ որդու մոտ հասնել չկարողանալու հանգամանքով... Միասին ավելի տանելի է...

ՎԱՐՈՒԺ ԳԱՐԻԳՈՐՅԱՆ

Հ. Գ. Փառք ու պատիվ թեթեւացիներին, որ այսքան գեղեցիկ ու անմոռաց դարձրին սիրված դերասանուհու այցը, իհարկե, նաեւ մեր առօրյան՝ այդ օրերին:

Մարզական

Չեմպիոնը, թե՞ գավաթակիրը

Այսօր ժամը 20-ին «Հանրապետական» մարզադաշտում Հակոբ Տոնոյանի անվան Սուպերգավաթը կվիճարկեն հանրապետության չեմպիոն Երևանի «Փյունիկն» ու գավաթակիր Ալաշկերտի «Միկան»: Դա կլինի պատվավոր մրցանակի 7-րդ խաղարկությունը:

Չեմպիոնի եւ գավաթակրի միջեւ անցկացվող խաղում մրցաշրջանի ուժեղագույն թիմին որոշելու գաղափարը պատկանում է ֆուտբոլի ֆեդերացիայի նախկին նախագահ Արմեն Սարգսյանին: Նրա առաջարկով Սուպերգավաթն անվանվեց հայկական ֆուտբոլի մեծ երախտավորներից մեկի՝ Հակոբ Տոնոյանի անվամբ, որի ընտանիքի կողմից էլ պատրաստվեց մրցանակը: Սուպերգավաթի անդրանիկ խաղարկությունը կայացավ 1995-96 թթ. մրցաշրջանի ավարտին՝ հունիսի 9-ին: Այդ օրը «Հրազդանում» մրցեցին այդ տարվա ՀՖ չեմպիոն ու գավաթակիր «Փյունիկն» ու 2-րդ մրցանակակիր Գյումրու «Շիրակը»: Մրցակարգի համաձայն, եթե չեմպիոնը դառնում էր նաեւ գավաթակիր, ապա վերջինիս փոխարեն Սուպերգավաթը վիճարկում էր արծաթե մեդալակիրը: Մրցանակի անդրանիկ խաղարկությունում հաջողությունն ուղեկցեց շիրակցիներին (3-1):

Սուպերգավաթի հաջորդ խաղարկությունում «Փյունիկը» նվաճեց մրցանակը՝ 2-0 հաշվով հաղթելով «Արարատին»: Հետաքրքրական է, որ մինչ այդ մրցակիցները հանդիպել էին ՀՖ գավաթի եզրափակիչում, որում հաղթել էին արարատցիները:

Սուպերգավաթը նվաճելու «Փյունիկի» հաջորդ փորձն էլ հաջողությամբ պսակվեց: 2002 թ. մայիսի 9-ին չեմպիոնը մրցեց ՀՖ գավաթակիր «Միկայի» հետ: Դա պատվավոր մրցանակի համար առաջիկա խաղի մասնակիցների առայժմ միակ հանդիպումն էր: Խաղը բավական հաջող սկսվեց «Միկայի» համար: Արդեն 3-րդ րոպեին Անդրեյ Բուլանովը բացեց հաշիվը: «Փյունիկին» երկար ժամանակ չէր հաջողվում հավասարեցնել հաշիվը: 64-րդ րոպեին 2-րդ դեղին քարտը ստանալով, խաղադաշտը թողեց «Միկայի» կիսապաշտպան Գրիգոր Մկրտչյանը: 12 րոպե անց երկրի չեմպիոնին վերջապես հաջողվեց իրացնել թվային առավելությունը: Փոխարինման դուրս եկած Արամ Ոսկանյանն անկյունայինի խաղարկումից հետո գլխի հարվածով գրավեց դարպասը: Իսկ խաղավարից չորս րոպե առաջ Խոսե Բիլիբիոն հեռահար հարվածով հաղթանակ պարգեւեց «Փյունիկին», որը դարձավ կրկնակի Սուպերգավաթակիր:

Անցյալ տարի «Փյունիկը» 4-րդ անգամ վիճարկեց Սուպերգավաթը: Ինչպես եւ անդրանիկ խաղարկությունում, այս անգամ էլ չեմպիոնի մրցակիցն արծաթե մրցանակակիր «Շիրակն» էր: Չեմպիոնին չհաջողվեց ռեւանշի հասնել: «Շիրակը» կրկին հաղթեց (2-1)՝ 3-րդ անգամ արժանանալով Սուպերգավաթին:

Այսօր թե «Փյունիկում», թե «Միկայում» կան ֆուտբոլիստներ, ովքեր ճաշակել են Սուպերգավաթը նվաճելու բերկրանքը: Ամենատիտղոսակիրը «Միկայի» նորեկ, «Շիրակի» նախկին ավագ Հովհաննես Թահմազյանն է, որը եռակի սուպերգավաթակիր է: Հերթական հանդիպումը նրա համար կլինի 4-րդը: Իսկ ահա, «Փյունիկի» ավագ Արթուր Մկրտչյանը թիմի մարզիչ Վարդան Մինասյանի հետ բոլորից հաճախ՝ 4 անգամ վիճարկել է Սուպերգավաթը՝ երկու անգամ պատվո շքաղաքի կատարելով մրցանակով: Կրկնակի սուպերգավաթակիր է նաեւ «Փյունիկի» նորեկ, նախկին շիրակցի Կարեն Ալեքսանյանը, որը 3-րդ անգամ է մասնակցելու Սուպերգավաթի համար մրցավեճին: Հետաքրքրական է, որ Արմեն Շահգելդյանը 1997 թ. «Փյունիկում» դարձել է սուպերգավաթակիր, իսկ 2002 թ. արդեն «Միկայի» կազմում խաղացել է «Փյունիկի» դեմ: Նրա համար էլ հերթական խաղը կլինի 3-րդը: Չնայած երիտասարդ տարիքին, ժորա Հովհաննիսյանն արդեն 2 անգամ մասնակցել է Սուպերգավաթի խաղին եւ մեկ անգամ ճաշակել հաղթանակի քաղցրությունը: «Միկայի» մեկ այլ նորեկ՝ Վարդան Բիչախչյանն էլ Սուպերգավաթակիր է դարձել անցյալ տարի եւ հերթական խաղը կլինի 3-րդը: «Միկայի» երկու խաղացողներ՝ Տիգրան Հովհաննիսյանը 1998 թ. Սուպերգավաթակիր է դարձել «Ցեմենտում», իսկ Աղվան Մկրտչյանը, Վալերի Ալեքսանյանն ու Հովհաննես Անտոնյանը մրցանակը նվաճել են 2002 թ. «Փյունիկում»: Ինչպես տեսնում եք, երկու թիմերում էլ ներկայումս հանդես են գալիս փորձառու ֆուտբոլիստներ, որոնք մասնակցել են Սուպերգավաթի համար մրցավեճերին:

Սուպերգավաթի մրցախաղերը

9.6.96. «Շիրակ»-«Փյունիկ»՝ 3-1 (1-1)

0-1՝ Հայկ Մարգարյան (23), 1-1՝ Սամվել Նիկոլյան (35), 2-1՝ Կոլյա Եփրանոսյան (49), 3-1՝ Հարություն Վարդանյան (61):

15.6.97. «Արարատ»-«Փյունիկ»՝ 0-2 (0-0)

Վարազդատ Ավետիսյան (73), Արմեն Շահգելդյան (84):

15.11.98. «Շիրակ»-«Ցեմենտ»՝ 1-1 (0-0), 3-4 11 մ

0-1՝ Գագիկ Մանուկյան (85), 1-1՝ Սիեր Ավանեսյան (90):

18.12.99. «Շիրակ»-«Ցեմենտ»՝ 2-1 (1-1), լր. ժամ.՝ 1-0

1-0՝ Արտյոմ Բեռնեցյան (37), 1-1՝ Հակոբ Արտոյան (42, ինքնագոլ), 2-1՝ Արթուր Պետրոսյան (96):

9.5.2002. «Փյունիկ»-«Միկա»՝ 2-1 (0-1)

0-1՝ Անդրեյ Բուլանով (3), 1-1՝ Արամ Ոսկանյան (76), 2-1՝ Խոսե Բիլիբիո (86):

9.5.2003. «Փյունիկ»-«Շիրակ»՝ 1-2 (1-0)

1-0՝ Կառլ Լոմբե (11), 1-1՝ Տիգրան Դավթյան (74), 1-2՝ Երվանդ Հակոբյան (84):

Ռեկորդներ եւ ռեկորդակիրներ

• Սուպերգավաթի 6 խաղարկություններին մասնակցած 5 թիմերից միայն երեքին է հաջողվել շահել մրցանակը: Բոլորից հաճախ՝ 3 անգամ սուպերգավաթակիր է դարձել Գյումրու «Շիրակը»: 2 անգամ մրցանակին արժանացել է «Փյունիկը», մեկ անգամ՝ «Ցեմենտը»:

• Բոլորից հաճախ՝ 4-ական անգամ Սուպերգավաթը վիճարկել են «Շիրակն» ու «Փյունիկը»: «Ցեմենտը» մասնակցել է 2 խաղի, մեկական խաղ են անցկացրել «Արարատն» ու «Միկան»:

• 4 անգամ հաղթող է ճանաչվել չեմպիոնը, 2 անգամ՝ արծաթե մրցանակակիրը:

• Ֆուտբոլիստներից ամենատիտղոսակիրներն են նախկին շիրակցիներ Հովհաննես Թահմազյանն ու Արարատ Հարությունյանը, որոնք եռակի սուպերգավաթակիրներ են: Եվս 14 ֆուտբոլիստ մրցանակի կրկնակի դափնեկիր է:

• Արթուր Մկրտչյանն ու Վարդան Մինասյանը մասնակցել են Սուպերգավաթի 4 հանդիպման:

• Մարզիչներից ամենահաջողակն Անդրանիկ Ադամյանն է, որի գլխավորությամբ «Շիրակը» 3 անգամ նվաճել է Սուպերգավաթը:

Ոչ-ոքի առաջատարի հետ

Եվրոպայի առաջնության 10-րդ տուրում կենտրոնականն առաջատարների՝ Դավիթ Նավարայի եւ Լեւոն Արոնյանի մրցախաղն էր: Սեւ խաղաքարերով խաղացող հայ գրոսմայստերը հաղթանակի դեռքում լավ հնարավորություն կստանար նվաճելու չեմպիոնի տիտղոսը: Սակայն ինչպես երեւում է, երկու առաջատարներն էլ վերջնագծում որոշեցին ռիսկի չդիմել եւ խաղաղ դաշն կնքեցին: Նույնը վերաբերում է նաեւ առաջատարների խմբում գտնվող մյուս շախմատիստներին: Ոչ-ոքի ավարտվեցին նաեւ Իստրատեսկու-Իվանչուկ, Միրչեա-Գուրեւիչ, Նիկոլիչ-Կեմպինսկի պարտիաները:

Առաջնության ավարտից 3 տուր առաջ 7,5 միավորով աղյուսակը շարունակում է միանձնյա գլխավորել չեխ գրոսմայստեր Դավիթ Նավարան: Նրանից կեսական միավորով հետ են մնում Լեւոն Արոնյանը, Վասիլի Իվանչուկը, Անդրեյ Իստրատեսկուն եւ Եվգենի Միրոնիչենկոն: Վերջինս սպիտակներով հաղթեց Միխալ Կրասենկովին: Հայ շախմատիստներից 10-րդ տուրում իրենց օգտին հաղթական միավորներ գրանցեցին Գաբրիել Սարգսյանը, Կարեն Ասրյանն ու Արման Փաշիկյանը: Գաբրիելը հաղթեց Գաղիր Հուսեյնովին, Կարենն առավելության հասավ Ռալֆ Ակեսոնի նկատմամբ, իսկ Արմանը պարտության մատնեց Ստեֆան Քրիստիանսենին: Անաստասյանն ու Պետրոսյանը ոչ-ոքի խաղացին համապատասխանաբար Ստոցեկի եւ Ստեֆանսենի հետ: Մեկնարկում երկու անընդմեջ հաղթանակ տարած Արտաշես Մինասյանը վերջնագծում անհաջող է հանդես գալիս: Նա 3-րդ անընդմեջ պարտությունը կրեց՝ զիջելով Գրունբերգին:

Արոնյանից հետո մեր շախմատիստներից լավագույն արդյունքն ունի Կարեն Ասրյանը՝ 6,5 միավոր: 6 միավոր է վաստակել Գաբրիել Սարգսյանը, 5,5-ական՝ Աշոտ Անաստասյանն ու Տիգրան Պետրոսյանը: Արման Փաշիկյանն ունի 5 միավոր, իսկ Արտաշես Մինասյանի օգտին գրանցված է 4,5 միավոր:

11-րդ տուրում ուշադրության կենտրոնում կլինեն Արոնյան-Իստրատեսկու, Միրոնիչենկո-Նավարա, Իվանչուկ-Ասրյան պարտիաները:

Քաղաքական գործիչները շախմատ են խաղում

Երեկ Ազգային ժողովի կանաչ սրահում տեղի ունեցավ 14 պատգամավորների եւ 3 երիտասարդ խորհրդարանականների շախմատի միաժամանակյա մրցաշարը ՀՀ քառակի չեմպիոն Սմբատ Լոռյանի հետ, որի նախաձեռնողը ԱԺ կրթության, գիտության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանն էր: Ինչպես նշեց տկն Հակոբյանը, միջոցառման նպատակն էր նաեւ կազմավորել շախմատի հավաքական, որը կմասնակցի Սոչիում ավանդաբար անցկացվող ԱՊՀ երկրների խորհրդարանականների շախմատի մրցումներին: Այս մրցաշարը նվիրված էր Տիգրան Պետրոսյանի ծննդյան 75-ամյակին եւ Հանրապետության օրվան: Ի դեպ, ԱԺ պատգամավոր Աշոտ Աղաբաբյանը նվիրել էր շախմատային 10 խաղասեղան:

Մրցաշարի մասնակիցներին ողջունեցին եւ շնորհավորեցին ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը, ՀՀ պաշտպանության նախարար, շախմատի ՀՀ ֆեդերացիայի նախագահ Սերժ Սարգսյանը: ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանն էլ ողջունելով այս խրախուսելի նախաձեռնությունը, տեղեկացրեց, որ ժամանակին կառավարության կազմից լավագույն շախմատ խաղացող է համարվել ֆինանսների նախկին նախարար Էդուարդ Սանդոյանը:

Մոտ 2 ժամ տեւած մրցախաղում ԱԺ պատգամավորներից միայն 3-ին հաջողվեց ոչ-ոքի ավարտել պարտիան ճանաչված գրոսմայստերի հետ: Այդ հաջողակներն էին Հանրապետական խմբակցությունից՝ Արմեն Մխիթարյանը, «Օրինաց երկրից»՝ Գագիկ Մխեյանը եւ վարչապետության թեկնածու Արտակ Մանուկյանը (ԱԺ պատգամավոր Աշոտ Բաղդասարյանի օգնական): Իսկ հանձնաժողովի հաջորդ նախաձեռնությունը ԱԺ շենքում մարզադահլիճի վերակառուցումն է լինելու, որպեսզի պատգամավորները հնարավորություն ունենան զբաղվելու ակտիվ սպորտով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Խաղաղ տուր

Սարաեւոյի շախմատի մրցաշարի 7-րդ տուրում մրցակիցները բավական խաղաղասիրաբար էին տրամադրված: 5 հանդիպումներից չորսում գրանցվեց ոչ-ոքի: Միավորը բաժանեցին Մովսիսյանն ու Շիրովը, Պրեդոեւիչն ու Դիգդարեւիչը, Շորքն ու Սոկոլովը, Կուրաիցան ու Կոժուլը: Միակ արդյունավետ պարտիան Բոլոգանի եւ Աքալիկի մրցավեճն էր, որում հաղթեցին սպիտակները:

7 տուրից հետո առաջատարը Շիրովն է՝ 6 միավոր: Նրան մեկ միավորով է զիջում Սերգեյ Մովսիսյանը: 4,5 միավոր ունի 3-րդ տեղը զբաղեցնող Վիկտոր Բոլոգանը: Իվան Սոկոլովը 4 միավորով 4-րդ տեղում է: Աղյուսակը 2-ական միավորով եզրափակում են Աքալիկն ու Կուրաիցան:

Նալբանդյանը հաջող մեկնարկեց

Թենիսի «Ռոլան Գարոսի» մրցաշարը հաջող սկսեց Դավիթ Նալբանդյանը, որն առաջին փուլում հաղթեց Գասկեին (6-4, 7-5, 7-6): Անհաջողության մատնվեց զվեյցարուհի Մարի-Գայանե Միխայելյանը, որը պարտվեց ռուսաստանցի Մարիա Կիրիլենկոյից (5-7, 6-7): Յուրօրինակ ռեկորդ սահմանեցին ֆրանսիացիներ Ֆաբրիս Սանտորոն ու Անթոն Կլեմանը, որոնց մրցավեճը տեւեց 6 ժամ 34 րոպե: Նախկին ռեկորդը Ֆրանսիայի բաց առաջնությունում գրանցվել էր 1988 թ., երբ 1/16 եզրափակիչում Ալեքս Կարեխան 5 ժամ 31 րոպեում հաղթել էր արգենտինացի Էռնան Գումիին (6-1, 5-7, 6-7, 7-5, 9-7):

Հաջորդ փուլի ուղեգիր նվաճեցին Գրոժանը, Մանտիլյան, Լյուբիչիչը, Կոուբեկը, Բյորկմանը, Մալիսը, Լոռեսը, Կոստան:

Կանանց պայքարում հաջողությունն ուղեկցեց Վինուս Ուիլյամսին, Շնայդերին, Լիխովցեւային, Սերենա Ուիլյամսին, Միսկինային, Կապրիատուն, Մարտինեսին:

Հետագա պայքարն առանց հայերի

Էլիստայում շարունակվում է 500 հազար դոլար ընդհանուր մրցանակային հիմնադրամով շախմատի կանանց աշխարհի առաջնությունը: Ցավոք, Հայաստանի երկու պատվիրակներն էլ 2-րդ փուլում անհաջողության մատնվեցին եւ դուրս մնացին հետագա պայքարից: Էլինա Դանիելյանի մրցակցուհին չին շախմատիստուհի Սյու Յունխուան էր: Առաջին պարտիայում սպիտակներով խաղացող չին շախմատիստուհին հաղթեց, իսկ 2-րդ պարտիան ավարտվեց ոչ-ոքի:

Լիլիթ Մկրտչյանը Պիա Կրամլինգի հետ առաջին պարտիան սպիտակներով ավարտեց ոչ-ոքի, իսկ երկրորդում՝ պարտվեց: 1/16 եզրափակիչի 5 մրցախաղերում հաղթողին որոշելու համար հարկ եղավ լրացուցիչ հանդիպումներ անցկացնել: Ամենահամառը Նատալյա Ժուկովա-Նադեժդա Կոսինցեւա եւ եկատերինա Պոլովնիկովա-եկատերինա Լախնո մրցամարտերն էին: Մրցակցուհիներին հարկ եղավ 7 պարտիա անցկացնել: Ի վերջո, հաղթելով 4-3 հաշվով, հաջորդ փուլ մտան Լախնոն եւ Ժուկովան:

1/8 եզրափակիչում կմրցեն հետեւյալ զույգերը. Տատյանա Կոսինցեւա-Հումի Կոնեռու, Մայա Լոմինեյշվիլի-Նանա Չագնիձե, Յանա Յացկովա-Մայա Չիբուրդանիձե, Նատաշա Բոյկովիչ-Կերեւան Կախիանի, Եկատերինա Կովալեւսկայա-Կատերինա Լախնո, Պիա Կրամլինգ-Վիկտորիա Չմիլիտե, Նատալյա Ժուկովա-Անտոանետա Ստեֆանովա, Էլիզաբեթ Պյոտց-Սյու Յոյխուա:

«Սելթիկը» գավաթակիր

Շոտլանդիայում եւս հայտնի դարձավ գավաթակիրը: Հաջողությունն ուղեկցեց երկրի չեմպիոն «Սելթիկին»: Վճռորոշ խաղում «Սելթիկը» 3-1 հաշվով պարտության մատնեց «Դանֆերմլայնին»: «Սելթիկի» կազմում 2 գոլ խփեց թիմի լավագույն ռմբարկու Հենրիկ Լարսոնը, որը վերջին խաղն անցկացրեց շոտլանդական ակումբի կազմում: «Սելթիկում» անցկացրած 7 մրցաշրջանների ընթացքում Լարսոնը 315 խաղում խփել է 242 գոլ: Այս ցուցանիշը թիմի պատմության մեջ 3-րդն է: Լավագույն արդյունքը պատկանում է Մակգրորիին (470 գոլ): Երկրորդ ցուցանիշն ունի Լենոքսը (273):

Էջը պատրաստեց
ԱՇՈՏ ՀԱՅԲԱՊԵՏՅԱՆԸ

Հաշվարկային հաշվեկշիռ առ 01.01.2004 թ. *Ձև N 1*

Կազմակերպության ծածկագիրը
անվանումը «Երևանի գեղարվեստական ժամացույցների գործարան» ԲԲԸ
Փաստացի գործունեության ժամացույցների արտադրություն 33301
հիմնական երկու տեսակները
Պետական ռեգիստրում գրանցման համարը 27812000979
Հարկ վճարողի հաշվառման համարը 00401886
Չափի միավորը հազ. դրամ
Գտնվելու վայրը ք. Երևան, Լ. Լիսինյանի 33
Փաստացի գործունեության
իրականացման վայրը ք. Երևան, Լիսինյանի 33

Անվանում	տող	Եկամտի տարվա վերջին	Հաշվետու տարվա ավարտին
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	557067	588895
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	557067	588895
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	090	270345	270346
Առագաստ ապրանքներ	110	3308	3301
Արտադրամ	130	90494	90494
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	12	12
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	40172	40361
Կարճաժամկետ ֆինանսական պարտքեր (բացի գծով	170	413	607
Այլ դեբիտորական պարտքեր	180	197	2545
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	1142	1014
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում	210	1361	
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	407444	408680
Հաշվեկշիռ	230	964511	997575
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	240	303030	303030
Վերագնահատումից եւ վերադասումից տարբերություններ	260	335905	359082
Կուտակված շահույթ	270	(115868)	(108646)
Ընդամենը սեփական կապիտալ	300	523067	553466
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	215917	216435
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	216169	217943
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	152	240
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական	420	67	235
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ	430	582	1056
Այլ կրեդիտորական պարտքեր	450	8557	8200
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	441444	444109
Հաշվեկշիռ	500	964511	997575

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2003 թ. *Ձև N 2*

Տողերի անվանումներ	տող	Եկամտի տարվա վերջին մնացորդ ըստ նախորդ տարվա		Հաշվետու տարվա	
		սեփական	օտար		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	286709		285976	
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	(282236)		(281507)	
Համախառն շահույթ (կորուստ)	030	4473		4469	
Իրացման ծախսեր	040	(658)		(658)	
Վարչական ծախսեր	050	(12611)	(9459)	(10032)	(1332)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (կորուստ)	060	(8796)		(6221)	(1332)
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում	070	32728	17034	13948	3442
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում	080	(19284)	(12416)	(13633)	(1589)
Գործառնական շահույթ (կորուստ)	090	4648	(4841)	(5906)	521
Այլ ոչ գործառնական շահույթ (կորուստ), այդ թվում	130	5740	(34917)	5359	
Սովորական գործունեությունից շահույթ (կորուստ)	140	10388	(39758)	(547)	521
Ցուռ շահույթ (կորուստ) հարկման շահութահարկի գծով	160	10388	(39758)	(547)	521
Ցուռ շահույթ (կորուստ) շահութահարկի գծով ծախսի (եկամտի) հետո	180	10388	(39758)	(547)	521

Ղեկավար՝ Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Գլխավոր հաշվապահ՝ Ռ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

FINCA
Small Loans-Big Changes

«Ֆինկա» բարեգործական հիմնադրամը հայտարարում է մրցույթ վարորդի թափուր տեղի համար:

Ներկայացվող պահանջներն են՝
- «Նիվա» մակնիշի սեփական ավտոմեքենա.
- Վարորդական աշխատանքի փորձ.
- Հայերենի եւ ռուսերենի լավ իմացություն.

Դիմումներն ընդունվում են մինչեւ մայիսի 31-ը:
Հեռախոս՝ 58-48-63, 54-55-31, 54-55-32
Հասցե՝ Երեւան, Ագաթանգեղոսի փ. 2 ա («Սպարտակ» մարզակումբի հարեւանությամբ)

Armenian European Policy and Legal Advise Center

is seeking Short-term Experts for the activity concerning the 'Advice on Financial Sector Issues'.
Requirements:
- At least 5 years professional experience and strong knowledge of issues related to the financial markets;
- A clear overview of the current situation of the Armenian financial sector;
- A good understanding of the legislative and institutional gaps within the Armenian financial sector;
- A knowledge of the EU financial sector regulations and trends;
- Good understanding fof the EU's financial sector's structure and developments;
- Excellent skills in drafting reports in financial markets analysis in English language.

Duration: to be agreed.

Commencement date: As soon as possible.
For the detailed information please visit the announcement section on our web-site www.aeplac.am
You are invited to submit your CV, in English, to **info@aeplac.am** not later than 24th of May 2004.
No phone calls and visits will be entertained.

Only short listed candidates will be contacted for interviews.

Request for Qualifications (RFQ)
Deadline June 4

The Urban Institute Local Government Program funded by USAID announces a tender among companies specializing in market research and feasibility analysis. The goal of this study is to investigate the constraints and opportunities in developing a profitable sports tourism and recreation sector in the city of Vanadzor and to generate a report summarizing all the findings and providing a set of recommendations to local government, businesses and prospective investors for development of this sector of city economy. The following tasks needs to be performed by the consulting company, among others:

- Study the market potential for sports, sports tourism, and recreation and spa facilities located in Vanadzor.
- Study the condition and current status of spa area within Vanadzor administrative boundaries mainly in the vicinity of sanatorium Gougark, which provides a variety of medical and recreational services.
- Study and make an inventory of citys major sports facilities (sports schools, gyms, swimming pools) and parks and recreation areas, their physical condition and financial status.
- Study the condition of ski-lift and other infrastructure supporting this year-round recreation area (hotels, food facilities, ski rental, availability of qualified trainers, security measures, for hiking in mountains availability of trails, huts, maps etc.).
- Write a final report and submit it to the Urban Institute and Vanadzor City Hall.

Eligibility: any company having experience in market studies and able to provide appropriate track record is eligible. Preference will be given to local Armenian companies. Involvement of local experts from Vanadzor familiar with the topic is encouraged. The Urban Institute has limited funds for this activity. Therefore, the Urban Institute is looking for proposals that offer good value - both effective and reasonably priced.
This is NOT a Request for Proposal at this time. Your firm has to submit a LETTER OF QUALIFACATIONS to become eligible for submitting a proposal. For information regarding the RFQ please contact Arthur Drampian or Zara Chatinyan at the Urban Institute office at Khanjyan 41, email: adrampian@lgp.am or call 54-27-87.

ՀՀ Կենտրոնական բանկը 27.05.2004 թ. ժ. 9:00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	548.40	542.90	553.90
EUR	1	եվրո	663.89	659.90	667.90
RUR	1	ռուս. ռուբլի	18.92	17.80	20.10

For Your Internal News of Armenia Log on to
www.azg.am
www2.azg.am
In Armenian, Russian, English and Turkish

UNIStream Соединяем самое ценное

СИСТЕМА ДЕНЕЖНЫХ ПЕРЕВОДОВ

- из **Армении** в **Россию** и обратно - **1%** от суммы перевода
- **Грузия - 1,5%** от суммы перевода
- **Украина - 1,5%** от суммы перевода
- **Молдова - 1,5%** от суммы перевода
- **Кыргызстан - 1,5%** от суммы перевода

- **65** стран
- **500** городов
- **2000** пунктов обслуживания

- **Получатель перевода не несет никаких затрат**
- **Время доставки – всего несколько минут**

АДРЕСА ФИЛИАЛОВ ЗАО "ЮНИБАНК"

- **Центральный офис**

г. Ереван, ул. Амиряна 12
тел: (3741) **539870**
e-mail: unibank@unibank.am

- **Филиалы в г. Ереване:**

Филиал "КЕНТРОН"
ул. Абовяна 26
тел: (3741) **542431**

Филиал "МАЛАТИЯ"
ул. Себастия 141
тел: (3741) **776627**

Филиал "КОМИТАС"
ул. Комитаса 15/2
тел: (3741) **261838**

- **Филиалы в Армении:**

Филиал "ВАНАДЗОР"
г. Ванадзор, ул. Тигран Мец 53
тел: (37451) **40872**

Филиал "ГЮМРИ"
г. Гюмри, ул. Ахтанаки 1
тел: (37441) **33055**

АДРЕСА ФИЛИАЛОВ КБ "ЮНИАСТРУМ БАНК"

- **Центральный офис**

г. Москва, Суворовская пл. 1
тел: (095) 785-0595, 744-0404

- **Отделения в г. Москве:**

м. "Беговая", ул. Беговая, д. 4, стр. 1, тел. **785-05-72**
м. "Бульвар Дмитрия Донского", ул.Адмирала Лазарева 52, тел. **785-05-72**
м. "Варшавская", Варшавское шоссе 86, тел. **785-05-72**
м. "ВДНХ", ВВЦ, павильон N68, тел **933-45-94**
м. "Домодедовская", ул.Елецкая 15, тел. **785-05-72**
м. "Калужская", Старокалужское ш, 62,стр. 1, тел. **784-71-90**
м. "Китай-Город", ул.Варварка 14, тел. **787-11-73**
м. "Коломенская", ул. Коломенская 7, стр. 1, тел. **785-05-72**
м. "Новослободская", Суворовская пл. 1, тел. **785-05-95**
м. "Проспект Мира", Проспект Мира 33/1, тел. **797-58-03**
м. "Пражская", Востряковский пр-д 17, стр. 1, тел. **785-05-72**
м. "Сокол", Волоколамское шоссе 2, стр. 1, тел. **785-53-85**
м. "Сокольники", Сокольнический вал 52/5, тел. **286-00-25**
г. Люберцы, Октябрьский пр-т 146, тел. **785-05-72**

- **Филиалы в городах России:**

Волгоград, Екатеринбург, Иваново, Казань, Калининград, Краснодар, Красноярск, Люберцы, Новосибирск, Пермь, Ростов-на-Дону, Самара, Санкт-Петербург, Саратов, Сочи, Ставрополь, Тула, Тюмень, Уфа, Челябинск, Ярославль

- **Список банков входящих в Систему "Юнистрим" в странах СНГ**

Грузия
АО "КАВКАСИОНИ", **тел. (995) 32 - 96 - 14 - 44**
АО "НАРОДНЫЙ БАНК ГРУЗИИ", **тел. (995) 32 - 99 - 91 - 78**
Украина
АКИБ "УКРСИББАНК", **тел. (38044) 230 - 48 - 97**
Молдова
КБ "УНИВЕРСАЛБАНК", **тел. (373) 2 - 24 - 68 - 75**
Кыргызстан
АО "ЭКОБАНК", **тел. (996312) 690 - 316**

ЮНИБАНК РЕАЛЬНЫЕ ИНВЕСТИЦИИ | **53 98 70** www.unibank.am

Սույն հայտարարությունը չի հանդիսանում արժեթուղթ վաճառելու առաջարկ, կամ արժեթուղթ գնելու առաջարկի հայցում: Նման առաջարկը կարող է արվել միայն ազդագրով:

1000 հայ

ՀԱՍԱՐԱԿ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍ

«Պրայվիս Ինքուրընս»

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿ ԲԱԺՆԵՏՈՄԻ ԳԻՆԸ՝ 10.500 ԴՐԱՄ

Ազդագրի պատճենները կարող եք ստանալ ստորեւ նշված տեղաբաշխողից: Վերջինս միակ լիցենզավորված բրոքերային ընկերությունն է ՀՀ տարածքում, որն իրավասու է տեղաբաշխել տվյալ արժեթղթերն ըստ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի:

«Պրիվաս Ինվեստ»

ք. Երեւան-10, Նալբանդյան 50/26, հեռ.՝ 521812,
E-mail: privat@arminco.com

ԳՈՎԱԳԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 26 05. 2004 Գինը՝ 100 դրամ